



Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով
Վրաստանի պետական նախարարի աշխատակազմ



Քաղաքացիական հավասարության և ինտեգրման
պետական ուսումնական 2018 թվականի
գործնական պլանի կատարման հաշվետվություն

Թբիլիսի

2019 թ.

**Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական
նախարարի աշխատակազմ**

Հասցե. Թբիլիսի, 0114, Ինգոբրոդվա փ. № 7

Հեռախոս. (+995 32) 2923299; (+995 32) 2922632

Կայք-էջ. www.smr.gov.ge

Էլ.-փոստ. press@smr.gov.ge

Նախաբան.....	4
Ամփոփում – Ռազմավարության ինդիքների կատարման համառոտ տեսություն	6
Ռազմավարական նպատակ 1.....	10
Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին	10
Ռազմավարական նպատակ 2.....	52
Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում.....	52
Ռազմավարական նպատակ 3.....	61
Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում	61
Ռազմավարական նպատակ 4.....	82
Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի խրախուսում.....	82

Նախարան

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությունը, քաղաքացիական հավասարության և ինտեգրման ապահովումը ներկայացնում են Վրաստանի կառավարության գերակայություններից մեկը: Այս քաղաքականության իրականացման նպատակով Վրաստանի կառավարությունը 2015 թվականի օգոստոսին հաստատեց «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը և 2015-2020 թթ. գործնական պլանը»: Պետական քաղաքականությունը նպատակաուղղված է քաղաքացիական հավասարության ապահովմանը, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկման աճին, որակյալ կրթության մատչելիության բարելավմանը, պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, նրանց մշակույթի աջակցությանը և հանդուրժողական միջավայրի ամրապնդմանը:

Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը համակարգում է քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարությունը և համապատասխան գործնական պլանի մշակումը, իրականացումը և հաշվետվությունը:

2018 թվականի ընթացքում շարունակվեց քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության իմպլեմենտացիայի գործընթացը, իրականացվեցին ռազմավարությամբ նախատեսված կոնկրետ միջոցառումներ և պլանավորվեցին հավելյալ ակտիվություններ հետևյալ ռազմավարական նպատակներին հասնելու համար.

- ❖ Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին,
- ❖ Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների և հնարավորությունների ստեղծում,
- ❖ Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում,
- ❖ Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի ապահովում:

Պետական նախարարի աշխատակազմը ղեկավարում է վերը նշված ռազմավարության արդյունավետ իրականացման նպատակով ստեղծված պետական միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը: Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են պետական հաստատությունների, տեղական ինքնակառավարման, ինչպես նաև ԿԸՀ-ի Ժողովրդական պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները: Ռազմավարության և գործնական պլանի մոնիթորինգն իրականացնում է Վրաստանի Ժողովրդական պաշտպանին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհուրդը:

Սույն հաշվետվությունը արտացոլում է քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության շրջանակներում պետական հաստատությունների կողմից 2018 թվականի գործնական պլանով (հունվար-դեկտեմբեր) իրականացված միջոցառումները:

Սմփոփում–Ռազմավարության խնդիրների կատարման համառոտ տեսություն

Տարվա ընթացքում նշանակալից ուշադրություն հատկացվեց փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության աջակցությանը և նրանց քաղաքացիական ընդգրկման ապահովմանը: Նշված խնդրի շրջանակներում իրականացվեցին մի շարք միջոցառումներ, ինչը նպաստեց նրանց առջև ծառայած այնպիսի մարտահրավերին պատասխանելուն, ինչպիսին է կրթության մատչելիությունը: Ոչձևական կրթության միջոցով օժանդակություն ցուցաբերվեց Վրաստանի հանրային դպրոցներում կրթական գործընթացին գնչու երիտասարդների ընդգրկմանը, որի արդյունքում էլ նրանց թվաքանակը 2015 թվականից (5 գնչու) սկսած աճեց մինչև 263: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում առաջնահերթ հարց էր ներկայացնում գնչու բնակչության հաշվառման խնդիրը: Տարվա ընթացքում լրացուցիչ գրանցվեց 2 անձնավորություն: Գնչու բնակչությանը ցուցաբերվեց նաև անվճար իրավաբանական խորհրդատվություն: Դրա հետ միասին շարունակվեց սակավաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների լեզուների ուսուցումը հանրային դպրոցներում:

Պանկիսի կիրճի զարգացման ծրագրի մշակման նպատակով, պետական նախարարի աշխատակազմը, դեռևս 2017 թվականի մայիսից, բնակչության շահերից և կիրճի զարգացման հեռանկարներից ելնելով, սկսեց այս ուղղությամբ ձեռք բերած արդյունքների գնահատումը և կարիքների ուսումնասիրությունը: Այս նպատակով «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության» շրջանակներում ստեղծվեց միջգերատեսչական աշխատանքային խումբ, 2018 թվականին պատրաստվեց Պանկիսի կիրճի զարգացման ծրագիր և իմպլեմենտացիայի գործնական պլանի աշխատանքային տարբերակ: Տեղի ունեցան հանդիպումներ և խորհրդատվություններ Պանկիսի կիրճի բնակչության, Ավագների խորհրդի և քիստ կանանց խորհրդի ներկայացուցիչների, կրթական հաստատությունների աշխատակիցների, քաղաքացիական սեկտորի այն ներկայացուցիչների հետ, ովքեր աշխատում են կիրճի հիմնադրույթների և զարգացման հարցերի վրա և շահագրգիռ այլ անձանց հետ: Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց կիրճի բնակչության՝ Վրաստանի Եվրամիություն ինտեգրման գործընթացի մասին գիտակցության բարձրացմանը: Անցկացվեց ինտենսիվ տեղեկատվական քարոզչություն, որի շրջանակներում առաջին անգամ Պանկիսի կիրճի բնակչության, ի մասնավորի, հանրային դպրոցների տնօրենների և ուսուցիչների համար պլանավորվեց և իրականացվեց ուսումնական այց քաղաք Բրյուսել:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, գործնական պլանի համապատասխան, էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում անցկացվեց տեղեկատվական

բնույթի մի քանի հանդիպում, որտեղ ուշադրությունը կենտրոնացված էր այդ թվում գենդերային հավասարության, վաղ ամուսնությունների, ընտանիքում բռնության, բարեփոխումների մեխանիզմների վրա: Նշանակալից էր կանանց սոցիալ-տնտեսական ուժեղացման հարցը: Այս նպատակով, առաջին անգամ իրականացվեց ուսումնական վարժանք-դասընթաց «Ինչպես սկսենք և զարգացնենք բիզնես»:

Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջաններում շարունակվեց պետական լեզուն չգիտեցող քաղաքացիների համար ոչպետական լեզվով կազմված փաստաթղթերի թարգմանության ապահովումը: Տեղական մակարդակով էթնիկ փոքրամասնությունների ընդգրկման աճի նպատակով ուժեղացան պետական լիազոր-նահանգապետերի վարչությունում գործող խորհրդատվական խորհուրդները, ինչը օժանդակում է նրանց մասնակցությանը որոշումների ընդունման գործընթացին:

Հաշվետու ժամանակաշրջանում հանրային ծառայությունում ընդգրկվածության մեծացման և մասնագիտական զարգացման նպատակով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար արմատավորվեց ստաժավորման ծրագիր, ինչը մեծացրեց հետաքրքրությունը/մոտիվացիան դրան նկատմամբ, օժանդակեց մասնագիտական ունակություն-հմտությունների բարելավմանը, ընդգրկվածությանը և քաղաքացիական ինտեգրման գործընթացին:

Կախեթի և Քվեմո Քարթլիի պետական լիազոր-նահանգապետների վարչություններում ձևավորված խորհրդակցական խորհուրդների շրջանակներում շարունակվեց ակտիվ գործունեությունը: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների վերևում նշված ձևաչափում ընդգրկվածությամբ բացահայտվեցին կոնկրետ կարիքներ և անվանվեցին դրանց լուծման ուղիները:

2018 թվականին Վրաստանում անցկացված նախագահական ընտրությունների ֆոնի վրա նշանակալից էր էթնիկ փոքրամասնությունների կողմից ձայն տալու և իրազեկված ընտրություն կատարելու ապահովումը: Այս ուղղությամբ անցկացվեցին կոնկրետ միջոցառումներ, որոնք նպատակամղված էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընտրություններին լիարժեք և հավասար մասնակցությանը:

Մեդիային և տեղեկատվությանը էթնիկ փոքրամասնությունների հասանելիության ապահովումը ռազմավարության և գործնական պլանի առաջնահերթ ուղղություններից մեկն է: Այս տեսանկյունից նշանակալից էր յոթ լեզուներով կայք-էջի (www.1tv.ge) գործարկումը:

Հատկանշական է, որ 2018 թվականին շարունակվեց միջազգային մեխանիզմների շրջանակներում ստանձնած պարտականությունների կատարումը: Աջակցություն ցուցաբերվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ թիրախային խմբերի գիտակցության բարձրացմանը նրանց իրավունքների և հակախտրական օրենսդրության վերաբերյալ:

Տարբեր նախագծերի, այդ թվում ենթակառույցային նախագծերի իրականացման ուղիով օժանդակություն ցուցաբերվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավմանը: Առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց որակյալ կրթության մատչելիության ապահովմանը և պետական լեզվի իմացության մակարդակի

բարելավմանը, ինչը քաղաքացիական ինտեգրման գործընթացի կարևոր գործիքն է: Էլ ավելի աճեց 1+4 կրթական ծրագրով ընդունված ուսանողների թվաքանակը, աջակցություն ցուցաբերվեց ոչվրացալեզու հանրային դպրոցների ուսուցիչների որակավորման բարձրացմանը, գործարկվեց աշխատանք որոնողների մասնագիտական պատրաստման-վերապատրաստման և որակավորման բարձրացման պետական ծրագիրը, որի նպատակն է աշխատանքի շուկայում պահանջարկ վայելող մասնագիտություններից աշխատանք որոնողների մասնագիտական պատրաստմամբ/վերապատրաստմամբ և/կամ աշխատանքային տեղերում հետագա ստաժավորմամբ, նրանց մրցունակության բարձրացումը և այս ճանապարհով աջակցությունը աշխատանք որոնողների զբաղվածությանը:

Քաղաքացիական ինտեգրման գործընթացում նշանակալից մարտահրավեր է ներկայացնում պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացումը: Կրթության յուրաքանչյուր աստիճանին նշարունակվեց այն ծրագրերի և նախագծերի իրականացումը, որը նպատակաուղղված է պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը: Պետական լեզուն սովորելու նպատակով էլ ավելի ընդլայնվեց լսարանը այնպիսի թիրախային խմբերի ընդգրկմամբ, ինչպիսիք են Վրաստանի զինված ուժերում զբաղված և Ախալքալաքի ու Նինոծմինդայի Հայ Առաքելական Ուղղափառ թեմի հոգևոր անձինք և հավատավոր հոտը:

Շարունակվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մշակույթի և նույնականության պահպանության նպատակով կոնկրետ նախագծերի/միջոցառումների իրականացումը, ինչը նպաստեց միջմշակութային երկխոսության և հանդուրժողականության միջավայրի ուժեղացմանը:

Որպես եզրակացություն պետք է նշել, որ հաշվետու ժամանակաշրջանում նախաձեռնություններ և նորություններ իրականացվեցին քաղաքացիական ինտեգրման տարբեր ուղղություններով, ինչը դրական ազդեցություն գործեց էթնիկ փոքրամասնությունների հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ընդգրկման, պետական ծրագրերի և սերվիսների մասին նրանց տեղեկացվածության/գիտակցության բարձրացման, ինչպես նաև քաղաքացիական ընդգրկվածության բարելավման տեսանկյունից:

Տարվա ընթացքում, գործնական պլանով նախատեսված միջոցառումների և նախագծերի իրականացման նպատակով, պետական նախարարի աշխատակազմի աջակցությունն իրականացվում էր ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID) և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի (UNAG) «Հանդուրժողականության, քաղաքացիական գիտակցության և ինտեգրման աջակցության ծրագրի» շրջանակներում:

Ռազմավարական նպատակ 1
Հավասար և լիարժեք մասնակցություն քաղաքացիական և քաղաքական կյանքին

Նշված ռազմավարական նպատակի շրջանակներում սահմանվեցին առաջնահերթային ուղղությունները.

- ❖ Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկվածության բարելավում ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական մակարդակով,
- ❖ Որոշում ընդունելու գործընթացում նրանց մասնակցության/ընդգրկվածության բարելավում,
- ❖ Այնպիսի քաղաքական գործընթացներում, ինչպիսիք են ընտրությունները, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ամբողջական և հավասար մասնակցության ապահովում,
- ❖ Տեղեկատվության և մեդիայի, հասարակական սերիսների, պետական վարչարարության և իրավապահ մարմինների ու մեխանիզմների մատչելիության բարելավման ճանապարհով քաղաքացիական ընդգրկվածության ապահովում,
- ❖ Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների աջակցություն,
- ❖ Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց իրավունքների պաշտպանության աջակցությունն դրանց ուժեղացում,

Միջանկյալ նպատակ - 1.1. Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների աջակցություն

Խնդիր - 1.1.1 Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ քաղաքականության մշակում և իրականացում

Սույն խնդրի շրջանակներում առանձնացված են հետևյալ ուղղությունները.

- ❖ Փոքրաթիվ էթնիկ խմբերի նույնականության պաշտպանության աջակցություն,
- ❖ Գնչուների հաշվառման ապահովում,
- ❖ Գնչու երիտասարդներին կրթական համակարգում ընդգրկում,

Փոքրաթիվ և խոցելի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքների պաշտպանության և նրանց լիարժեք ինտեգրման աջակցությունը քաղաքացիական ինտեգրման քաղաքականության կարևորագույն խնդիրն է, որի իրականացմանը ընդգրկված են նաև ճյուղային նախարարությունները:

2018 թվականի ընթացքում շարունակվեց սակավաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մայրենի լեզուների ուսուցումը (օսերեն, չեչներեն, ավարերեն, ուդիերեն, աստերեն) սահմանված հանրային դպրոցներում:

Պետական նախարարի աշխատակազմի կողմից գնչուական համայնքի ներկայացուցիչների հզորացման և ընդգրկվածության ապահովման նպատակով որոշվեցին ռազմավարական խնդիրները: Դրանք լուծելու համար Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, «Ինկլյուզիոն ուսուցման աջակցության ծրագրի», «Կրթություն ստանալու երկրորդ հնարավորություն սոցիալական ինկլյուզիայով» ծրագրի շրջանակներում 2017-2018 թվականներին իրականացան մի քանի նախագծեր: Առանձնապես կարևոր էին գնչու երիտասարդների կողմից գնչուների սոցիալիզացման ուղղությամբ նախաձեռնած նախագծերը: Դրանցից ֆինանսավորվեց 6

նախագիծ, 24 464 լարի ընդհանուր արժողությամբ, որին ընդգրկված էին 54 երիտասարդ և 111 կամավոր աշակերտ և երիտասարդ:

Ոչձևական կրթության բաղադրիչների ուժեղացումը աջակցեց գնչուների ընդգրկմանը ձևական կրթական տարածքում: 2018 թվականին, դպրոցներում սովորում է 263 գնչու աշակերտ:

1.1.1.1 Ծննդյան կամ Անձնական վկայական չունեցող կամ թերություններով փաստաթղթեր ունեցող անձանց վկայականներ տալու համար պատշաճ միջոցառումների անցկացում, ինչը ապահովում է դրանց փաստաթղթերով ապահովումը

Այնպիսի խոցելի խմբերի համար, ինչպիսիք են գնչուները, վերստին մարտահրավերային էմնում նրանց հաշվառման և համապատասխան իրավաբանական կարգավիճակ շնորհելու հարցը:

2018թվականի ընթացքում Արդարադատության նախարարությունը, «Վրաստանում քաղաքացիություն չունեցող անձանց կրճատում և քաղաքացիություն չունենալու կանխարգելում» նախագծի շրջանակներում ապահովեց գնչուական համայնքի 2 ներկայացուցիչների նույնականացման տվյալների կարգավորումը և Անձը հաստատող վկայական տալը,

«Նորույթների և բարեփոխումների կենտրոնի» կողմից մատուցված տեղեկատվությամբ, գնչուների հաշվառման վիճակագրական տվյալները 2011-2018 թվականներին հետևյալն է.

Գործավարության կարգ	2011-2018
Վրաստանի քաղաքացիություն շնորհում	1
Վրաստանի քաղաքացիության հաստատում (ID քարտ)	17
Քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի հաստատում	18
Ծննդյան փաստի հաստատում/գրանցում	39
Գումարային	75

1.1.1.2 Քաղաք Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոյին առընթեր գոյություն ունեցող ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի արդյունավետ աշխատանք

Հաշվետու ժամանակաշրջանում Թբիլիսիի Սակրեբուլոյում անցկացվեց խորհրդի 11 նիստ, որտեղ քննարկվել են 38 հարցեր: Խորհրդի կազմակերպմամբ, ք. Թբիլիսիում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին անցկացվեց անվճար բժշկական հետազոտությունների չորս գործողություն, որի շրջանակներում շուրջ 350 ներկայացուցիչ օգտվեց անվճար բազմապրոֆիլ հետաքննություններից և խորհրդատվություններից: Տարվա ընթացքում Թբիլիսիի Սակրեբուլոյի և ազգային փոքրամասնությունների համակարգող խորհրդի աջակցությամբ, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 20 ուսանող ընդգրկված էր ք. Թբիլիսիի քաղաքապետարանի կողմից կազմակերպված թեմատիկ ճամբարներում:

1.1.1.3. Քաղաք Բաթումիում գործող էթնիկ կազմակերպությունների համար մունիցիպալային ծրագրերի մասին շնորհանդեսների կազմակերպում և էթնիկ փոքրամասնությունների լեզուներով գոյություն ունեցող պետական ծրագրերի մատուցում

Ք. Բաթումիի մունիցիպալիտետի կազմակերպմամբ, «Բարեկամության տանը» էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար անցկացվեց մունիցիպալային ծրագրերի շնորհանդես:

1.1.1.4 Վրաստանում բազմերանգ ժառանգության թեմատիկ ուսումնասիրություններ

- ❖ Թրիալեթի հունական հուշարձանների գույքագրում,
- ❖ Սամցխե-Ջավախեթի կաթոլիկ հուշարձանների գույքագրում,
- ❖ Լեռական ժառանգության կոմպլեքսային ուսումնասիրության-գույքագրման մեկնարկ:

Նույնականացվել են լեռն ճարտարապետների և ինժեներների նախագծերով կառուցված շուրջ 40 շենք, լեռն կարիչների մինչև 400 աշխատանք, լեռերի գործունեության արխիվային նյութ՝ 300 փաստաթուղթ, լեռերին պատկանող կամ նրանց հետ կապված շուրջ 50 շենք, դրամագիտական նյութ, լեռերի գերեզմաններ. Թրիլիսիի Կուկիայի կաթոլիկների, Քութաիսի, Բաթումի, Լագոդեխի, Դեդոփլիսաձղարոյի, Թեթրիձղարոյի, Մանգլիսի, Փիտավի, Ուրավլիի գերեզմանոցները և այլն:

1.1.1.5 Մշտապես գործող էքսպոզիցիա Բոլնիսում բնակվող էթնիկ փոքրամասնությունների մասին՝ Բոլնիսի թանգարան

Տարվա ընթացքում Բոլնիսի թանգարանում ընթացավ 2019 թվականին պլանավորված էքսպոզիցիայի նախապատրաստական գործընթացը: Էքսպոզիցիան նախատեսում է Քվեմո Քարթլիի բնության և մշակութային ժառանգության, այդ թվում տարածաշրջանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ինքնակենցաղի բացահայտում:

1.1.1.6 Վրաստանում գոյություն ունեցող հրեական նյութական մշակույթի հուշարձանների որոնում և ցուցադրում թանգարանում

2018 թվականին սկսվեցին ոչնյութական մշակութային ժառանգության հուշարձան՝ «Վրաց-հրեական 26-դարյա հազվագյուտ հարաբերությունների ավանդույթը» «ՅՈՒՆԵՍԿՕ» ներկայացնելու հայտի պատրաստման աշխատանքները:

1.1.1.7 Հրեական և վրացական հասարակայնությունների և կազմակերպությունների, ստեղծագործական և գիտական ոլորտների ներկայացուցիչների ավանդական հանդիպումների կազմակերպում

Դավիթ Բաագովի անվան Վրաստանի հրեաների և վրաց-հրեական հարաբերությունների պատմության թանգարանը, վրաց և հրեա ժողովուրդների 26-դարյա բարեկամության ընկերությունը և աշխարհի վրացի և հրեա կանանց «Էսթա» ասոցիացիան հրեա և վրացի կազմակերպությունների, ստեղծագործական և գիտական ոլորտների ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացրեց շուրջ

20 հանդիպում: Հանդիպումներին մասնակցում էին վրաց-հրեական արվեստի և գիտությունների ներկայացուցիչներ:

Հավելյալ միջոցառում

- ❖ Վրաստանի «Ավե սոլ» լատիշների համայնքի նախաձեռնությամբ «Թբիլիսիի բարեկամության տանը» բացվեց լատիշերեն լեզվի ուսուցման կիրակնօրյա դպրոց: Լատիշերեն լեզու է սովորում 7-10 տարեկան 12 երեխա:

Առանձնահատուկ ուշադրություն կենտրոնացավ Պանկիսի կիրճի զարգացման հարցերին: Պատրաստվեց **Պանկիսի կիրճի զարգացման ծրագիր**:

Պանկիսի կիրճի զարգացման ծրագրի մշակման նպատակով, պետական նախարարի աշխատակազմը, դեռևս 2017 թվականի մայիսից, բնակչության շահերից և կիրճի զարգացման հեռանկարներից ելնելով, սկսեց այս ուղղությամբ ձեռք բերած արդյունքները գնահատել և կարիքները ուսումնասիրել: Այս նպատակով, «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության» շրջանակներում ստեղծվեց միջգերատեսչական աշխատանքային խումբ, 2018 թվականին պատրաստվեց Պանկիսի կիրճի զարգացման ծրագիր և իմպլեմենտացիայի գործնական պլանի աշխատանքային տարբերակը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվեցին կոնկրետ ակտիվություններ, այդ թվում.

- ❖ Պետական նախարարի աշխատակազմի համակարգմամբ անցկացվեց տեղեկատվական ընթացակարգ պետական սերվիսների և ծրագրերի մասին: Պանկիսի կիրճի բնակչությանը հաղորդվեց տեղեկատվություն, այդ թվում, կրթական կարողությունների, մասնագիտական կրթության և զբաղվածության, առողջապահության և սոցիալական պաշտպանության, տնտեսական և ֆինանսական ծրագրերի և նորույթների, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մասին:
- ❖ Պետական նախարարի աշխատակազմի և ՀԻԲԱ ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ, Վրաստանում Եվրամիության պատվիրակության ֆինանսական աջակցությամբ, առաջին անգամ իրականացվեց Պանկիսի կիրճի կանանց գիտակցության բարձրացմանը և ընդգրկման ամրապնդմանը կողմնորոշված նախագիծ՝ «Տեղեկատվության բարձրացում Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացի մասին»: Նախագծի շրջանակներում, ք. Թբիլիսիում պլանավորված երկօրյա սեմինարին մասնակցեցին Պանկիսի կիրճի հանրային դպրոցների մանկավարժները և տնօրեն կանայք (20 հոգի), ովքեր հնարավորություն ունեին ստանալու տեղեկատվություն Վրաստանի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման գործընթացի մասին, դատողություն անելու և քննարկելու վերևում նշվածի հետ կապված հրատապ հարցեր, ընդգրկվելու մշակութային ծրագրին, դիտելու Վրաստանի մայրաքաղաքը: Նախագիծը երկրորդ փուլում է, 2019 թվականին նախատեսվում է մասնակիցների ուսումնական

այց ք.Բրյուսել, որտեղ նրանք կհանդիպեն եվրոպացի գործընկերներին և կձանոթանան կրթական համակարգին:

Վայնախուրի մշակույթի հանրաճանաչության և մշակութային երկխոսության հզորացման նպատակով պետական նախարարի աշխատակազմի կողմից աջակցություն ցուցաբերվեց և իրականացվեցին մի շարք միջոցառումներ.

- ❖ Պետական նախարարի աշխատակազմի, «Կովկասցի կանանց կոնգրես» կանանց միության կազմակերպմամբ և նախագահի պահուստային հիմնադրամի աջակցությամբ՝ քիստ լուսավորիչ և հոգևոր գործիչ Մաթե Ալբութաշվիլիի ծննդյան 155-րդ տարեդարձին նվիրված հիշատակի երեկո կայացավ:
- ❖ Գրող, լուսավորիչ և հոգևոր գործիչ Մաթե Ալբութաշվիլիի ծննդյան 155-րդ տարեդարձին նվիրված միջոցառումների շրջանակում Սովորող երիտասարդության ազգային պալատում անցկացվեց աշակերտական կոնֆերանս թեմայով. «Մաթե Ալբութաշվիլիի կենսագրական շտրիխները և ստեղծագործությունը. Պանկիսի կիրճը ժամանակի և տարածքի կտրվածքում»: Կոնֆերանսին մասնակցում էր ք.Թբիլիսիի և Դուխի, Ջոդոլո և Չարգալի գյուղերի դպրոցների քսան աշակերտ,
- ❖ Վայնախուրի մշակույթի օրեր – պետական նախարարի աշխատակազմի և ք. Փոթիի «Նոր Վրաստանի համալսարանի» համագործակցության շրջանակներում իրականացվեց բազմերանգ ծրագիր՝ կատարվեցին երաժշտական համարներ, լսվեց հանրային դասախոսություն վրաց իրականությունում քիստ ժողովրդի ֆեռմենի և վրաց-վայնախուր հարաբերությունների մասին, տեղի ունեցավ Վայնախուրի թեմայով ստեղծված գրքերի շնորհանդես,
- ❖ Խորհրդարանի ազգային գրադարանում տեղի ունեցավ քիստ գրող և բանաստեղծ Մայա Մարգոշվիլիի գրքի շնորհանդես:
- ❖ Կոտե Մարջանիշվիլիի անվան պետական դրամատիկական թատրոնի ձեռնահարկում տեղի ունեցավ Պանկիսի կիրճում Դուխի գյուղի հանրային դպրոցի աշակերտների կողմից բեմադրված «Բաց պատշգամբ» ներկայացման ցուցադրություն: Ներկայացմանը մասնակցում էր ավարտական դասարանների շուրջ 10 աշակերտ,
- ❖ Պանկիսի կիրճի Դուխի գյուղում հայտնի գրող և հասարակական գործիչ Գիգի Խորնաուլի ստեղծագործություններին նվիրված միջոցառման շրջանակներում տեղի ունեցավ նրա գրքերի շնորհանդեսը, որոնցում զետեղված են պատմություններ քիստերի մասին,
- ❖ Դուխի գյուղում կայացավ Դուի Դիշնելի անվան ձիարշավ, որը նվիրվեց քիստերի՝ Պանկիսի կիրճում հաստատվելու 200-ամյակին, պարզևատրվեցին հաղթողները,
- ❖ «Եվրոպայի օրեր 2018»-ի շրջանակներում Դավիթ Աղմաշենեբեղիի անվան ազգային պաշտպանության ակադեմիայում իրականացվեց ծանոթության փուլ, որին մասնակցություն ունեցան «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագծի մասնակից հասակակից լուսավորիչներ և աշակերտներ Պանկիսի կիրճից,
- ❖ Պանկիսի կիրճից աշակերտները այցելեցին նաև Վրաստանի կառավարության վարչություն, որտեղ ծանոթացան քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ առկա իրավիճակին և դատողություններ արեցին իրենց հետաքրքիր նախաձեռնությունների մասին:

Միջանկյալ նպատակ. 1.2 Գենդերային մեյնստրիմինգ

Խնդիր. 1.2.1 Աջակցություն գենդերային նշանով խտրականության վերացմանը

Պետական միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությանը ընդգրկված պետական հիմնարկությունները տարվա ընթացքում շարունակեցին կոնկրետ միջոցառումների և նախագծերի իրականացումը հետևյալ առաջնահերթ ուղղություններով.

- ❖ Կանանց իրավունքների/գենդերային հավասարության մասին գիտակցության բարձրացում,
- ❖ Ընտանիքում բռնության/վաղ ամուսնությունների մասին տեղեկատվության մատչելիություն,
- ❖ Կանանց սոցիալ-տնտեսական ամրապնդման աջակցություն,

Ընտանիքում բռնության և վաղ ամուսնությունների թեմայի շուրջ տարվա ընթացքում ինտենսիվ ռեժիմով անց էին կացվում հանդիպումներ: Ընդլայնվեցին հանդիպումների տեսադաշտը և բենեֆիցիարների թիվը: Վերը նշված թեմատիկայի կապակցությամբ 2018 թվականին իրականացվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների (30) վերապատրաստություն, ովքեր տեղեկատվություն տարածեցին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում:

2018 թվականին առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց բիզնես ունակություն-հմտությունների զարգացմանը, որի արդյունքում նրանք պատրաստեցին կոնկրետ նախագծային առաջարկություններ:

1.2.1.1 Քվեմո Քարթլիի մունիցիպալիտետների մեջ մտնող Կանանց սենյակներում – վարժանքներ՝ կանանց տնտեսական հզորացման, կանանց նկատմամբ բռնության կրճատման և կանխման մասին, ինչպես նաև նրանց իրավունքների և որոշումների ընդունման գործընթացում կանանց ընդգրկման մասին, ձեռներեցության համաժողովում Քվեմո Քարթլիի տարածաշրջանում բնակվող կանանց ընդգրկվածություն

Քվեմո Քարթլիի տարածաշրջանում ակտիվ գործունեությունը շարունակեցին «Քաղաքացիական հավասարության և ինտեգրման պետական ռազմավարության և 2015-2020 թթ. գործնական պլանի» շրջանակներում ստեղծված «Կանանց սենյակները»: Վերը նշված մունիցիպալային ծառայությունը գործում է տարածաշրջանի բոլոր յոթ մունիցիպալիտետներում, որի նպատակն է կանանց համար հետաքրքիր, հարկավոր տեղեկատվության և սպասարկումների մատչելիության ապահովումը, ինչն իր հերթին, նրանց ընդգրկվածությանը աջակցության կարևորագույն նախապայման է:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գլոբալային ծրագրի շրջանակներում, «Կանանց սենյակներում» անցկացվեցին հանդիպումներ «Գենդերային նշանով սեռի ընտրություն և կանխարգելում» թեմայով: Բռնության կանխարգելման 16 օրյա քարոզչության շրջանակներում, վեց մունիցիպալիտետում անցկացվեցին միջոցառումներ և ակտիվություններ, որտեղ ակտիվորեն ընդգրկված էին Քվեմո Քարթլիում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Տարվա ընթացքում կանանց սենյակներում անցկացված հանդիպումների վիճակագրություն.

- Բոլնիսի մունիցիպալիտետ – 16 հանդիպում, 8 վարժանք, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 52 բենեֆիցիար,
- Թեթրիձորայի մունիցիպալիտետ – 11 հանդիպում, 6 վարժանք, 175 բենեֆիցիար,
- Դմանիսի մունիցիպալիտետ – 5 հանդիպում, 2 վարժանք, 38 բենեֆիցիար,
- Գարդաբանի մունիցիպալիտետ – 12 հանդիպում, 10 վարժանք, 140 բենեֆիցիար,
- Ծավկայի մունիցիպալիտետ – 18 հանդիպում, 4 վարժանք, 40 բենեֆիցիար,
- Մառնեուլի մունիցիպալիտետ – 40 հանդիպում, 8 վարժանք, 278 բենեֆիցիար,

Տարածաշրջանի մասշտաբով «Կանանց սենյակների» շրջանակներում, տարվա ընթացքում տեղի ունեցավ 156 հանդիպում այնպիսի նշանակալից թեմաների մասին, ինչպիսիք են. վաղ ամուսնություն, բռնություն ընտանիքում, գենդերային հավասարություն և այլն: Անցկացվեցին տարբեր վարժանք-դասընթացներ. Մարդու իրավունքների պաշտպանություն, փոքր և միկրո բիզնեսի զարգացում, հաղորդակցություն, լիդերություն, բիզնեսի զարգացում և այլն, որտեղ ընդգրկված էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 740 կին:

«Կանանց սենյակների» գործունեության շրջանակներում անվճար բժշկական քննությունից և խորհրդատվություններից օգտվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 300 կին:

Դմանիսի քաղաքապետարանի կանանց սենյակում իրականացվեց ֆինանսական մենեջմենտի ուսուցման անվճար 3 – ամսյա դասընթաց, որի նպատակն էր կանանց տնտեսական հզորացումը: Դասընթացին մասնակցություն ունեցավ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 3 կին:

1.2.1.2 Կախեթի տարածաշրջանի մունիցիպալիտետներում ստեղծված կանանց սենյակների գործունեության աջակցություն

2017 թվականին պետական լիազորի վարչության և «Հեկս/Էպերս» և «Մերսի կորպս» ոչկառավարական կազմակերպության միջև ձևակերպված հուշագրի հիման վրա, 2018 թվականին Կախեթի տարածաշրջանի բոլոր մունիցիպալիտետներում և Սազարեջոյի մունիցիպալիտետի Յորմուղանլո գյուղում ստեղծվեց մունիցիպալային սերվիս «Կանանց սենյակ»:

Գենդերային բռնության դեմ ուղղված 16-օրյա քարոզչության շրջանակներում, Թելավի մունիցիպալիտետի քաղաքապետարանի, Թելավի մունիցիպալիտետի գենդերային հավասարության խորհրդի, Թելավի «Կանանց սենյակ»-ի, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի և ոչկառավարական կազմակերպություն «Վիքեա»/WeCare-ի «Տղամարդիկ հոգում են» ծրագրի կազմակերպմամբ, Ղարաջալա գյուղում կայացավ տեղեկատվական հանդիպում: Նշված հանդիպման նպատակը ներկայացնում էր տղամարդկանց գիտակցության բարձրացման աջակցությունը գենդերային հավասարության հարցերի նկատմամբ:

«Կանանց սենյակի» շրջանակներում տեղի ունեցան տեղեկատվական հանդիպումներ տարբեր թեմաների շուրջ, այդ թվում. «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիայի», ինչպես նաև սոցիալական սերվիսների և պետական

ծրագրերի (առողջապահության, գյուղատնտեսության) թեմայով: «Կանանց սենյակի» մենեջերների նախաձեռնությամբ անցկացվեց միջոցառում «Մեկ արևի ներքո», որով օժանդակություն ցուցաբերվեց միջմշակութային երկխոսությանը, ստեղծվեց, այսպես կոչված «հանդուրժողական հագուստի» էսքիզ: Գուրջասանի մունիցիպալիտետի «Կանանց սենյակի» նախաձեռնությամբ, Ղիտասանի գյուղում անցկացվեցին հանդիպումներ թեմաներով. «Ընտանիքում և կանանց նկատմամբ բռնություն, վաղ ամուսնություններ և բուլինգ, գյուղում բնակվող կանանց տնտեսական և քաղաքական ընդգրկվածության ուժեղացում»:

1.2.1.3/1.2.1.6 Մամցիե-Ջավախեթի տարածաշրջանի մունիցիպալիտետներում ստեղծված կանանց սենյակների գործունեության աջակցություն,

Մամցիե-Ջավախեթի տարածաշրջանի բոլոր մունիցիպալիտետներում գործում են «Կանանց սենյակներ», որոնց նախաձեռնությամբ և մունիցիպալիտետների աջակցությամբ իրականացվեցին տարբեր միջոցառումներ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց ակտիվության աճի և գենդերային հավասարության ուղղությամբ: Կազմակերպվեցին հանդիպումներ ֆերմեր կանանց, ձեռներեց կանանց հետ, ինչպես նաև անցկացվեցին վարժանքներ, սկրինինգ ծրագրեր, ընտանեկան բռնության, թրեֆիկինգի, վաղ ամուսնության կանխման, կանանց քաղաքական ակտիվության աճի և լիդերության ունակություն-հմտությունների զարգացման հարցերի շուրջ, տարվա ընթացքում տարածաշրջանի բոլոր վեց մունիցիպալիտետում անցկացվեց 46 հանդիպում (628 բենեֆիցիար):

Գենդերային հավասարության հարցերի մասին երկրամասի վարչական ներկայացուցիչը ակտիվորեն համակարգում է մունիցիպալիտետներում ստեղծված գենդերային խորհուրդները: Այս տեսանկյունից հաշվետու ժամանակաշրջանում նշանակալից էր եզերքի վարչության հրավերով GIZ միջազգային կազմակերպության կողմից անցկացված վարժանքների շարքը գենդերային բյուջետավորման հարցերով:

1.2.1.5 Մրցութային հանձնաժողովների կազմում կին հանրային գործիչների ընդգրկման ապահովում

Ինչպես երկրամասային վարչության, այնպես էլ մունիցիպալիտետներում մրցութային հանձնաժողովներում կին անդամների քանակը ներկայացված է հավասարակշռված: Անցյալ տարի երկրամասային վարչությունում մրցութային հանձնաժողովի երկու անգամ կին նախագահեց:

Մունիցիպալիտետների մրցութային հանձնաժողովներում որպես անդամներ, ինչպես նաև Ախալքալաքի և Նինոծմինդայի մունիցիպալիտետների նախագահներ զբաղված էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

1.2.1.8-1.2.1.10

- ❖ Ակադեմիայի IV կուրսի յունկերների համար գնահատելի դասախոսություն (4 ժամ) գենդերային հավասարության սկզբունքների մասին,
- ❖ I կուրսի յունկերների հետ ծանոթության բնույթի վարժանք (2 ժամ) գենդերային հավասարության սկզբունքների և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի մասին,

❖ **2018-2019 ակադեմիական տարում ակադեմիայում ընդգրկված ունկնդիրների համար գենդերային հավասարության սկզբունքների ճանաչողական բնույթի վարժանք (2 ժամ)**

ՀԻԻԱ Դավիթ Ադմաշենբեկի անվան Վրաստանի ազգային պաշտպանության ակադեմիան աջակցում է գենդերային հավասարության և կանանց խաղաղության և անվտանգության սկզբունքների ինտեգրմանը, որն իրականացվում է ՄԱԿ-ի կանանց կազմակերպությունների և կանանց տեղեկատվական կենտրոնի աջակցությամբ: Ազգային պաշտպանության ակադեմիայի ինչպես բակալավրային, այնպես էլ կարիերային դպրոցների ուսումնական պլանի համաձայն, դպրոցներում ընդունված բոլոր նոր հոսքերին, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին անց են կացվում ուսուցումներ թեմայով. «Գենդերային հավասարության սկզբունքները և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը»:

2018 թվականի ընթացքում գենդերային հավասարության սկզբունքների մասին գնահատման դասախոսություն անցկացվեց IV կուրսի 88 յունկների, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Իսկ 2017-2018 ուսումնական տարում անցկացվեց ութ ժամյա վարժանք «Գենդերային հավասարության սկզբունքների և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի» մասին:

1.2.1.11 Ուսումնական ծրագրեր և վարժանքներ գենդերային թեմատիկայով, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսուցանողական աշխատակիցների համար

Իրավապահների կողմից հանցագործության փաստին արդյունավետ արձագանքի և արդյունավետ հետաքննության ապահովման համար, 2018 թվականի հունվարի 11-ին ստեղծվեց Վրաստանի ներքին գործերի նախարարության մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտ, որը մոնիթորինգ է անցկացնում հետևյալ գործերի հետաքննությանը.

- ❖ Ընտանեկան հանցագործություն,
- ❖ Կանանց նկատմամբ բռնություն,
- ❖ Խտրականության նշանով կատարված հանցագործություն,
- ❖ Ատելության մոտիվացված հանցագործություն,
- ❖ Թրեֆիկինգ,
- ❖ Անչափահասների կողմից և նրանց նկատմամբ կատարված հանցագործություն:

Դեպարտամենտի կողմից.

- ❖ Մշակվեց ատելության մոտիվացված հանցագործության հայտնաբերման և հետաքննությունում առկա միտումներ և մարտահրավերներ արտացոլող վերլուծական փաստաթուղթ, որն ուղարկվում է ՆԳՆ օպերատիվ ենթաբաժին ծանոթանալու համար,
- ❖ Սկսվել է աշխատանքը խտրականության մոտիվով կատարված հանցագործությունների մասին վիճակագրական տվյալների հավաքագրումը բարելավելու նպատակով,

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը սկսեց քննիչների մասնագիտացման գործընթաց՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան հանցագործության արդյունավետ հետաքննության նպատակով: Առաջին փուլում, ուսումնական դասընթացի ընթացքում իրականացվեց այն տարածքային միավորների քննիչների մասնագիտացումը, որտեղ բոլորից բարձր է ընտանեկան հանցագործության ցուցանիշը, թերևս մասնագիտացման դասընթաց ներառում են ներքին գործերի

նախարարության բոլոր քննական կառույցները: 2018 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակաշրջանում, ընտնիքում բռնության և ընտանեկան հանցագործության քննության հարցերով հատուկ պատրաստության դասընթաց անցավ 110 քննիչ:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում հատուկ դասընթաց անցավ 13 քննիչ հետևյալ մունիցիպալիտետներից.

- Մազարեջոյի մունիցիպալիտետ – 3 քննիչ,
- Ախալցխի մունիցիպալիտետ – 2 քննիչ,
- Մառնեուլիի մունիցիպալիտետ – 2
- Գարդաբանի մունիցիպալիտետ – 2
- Ադիգենի մունիցիպալիտետ – 1
- Ախալքալաքի մունիցիպալիտետ – 1
- Նինոծմինդայի մունիցիպալիտետ – 1
- Լագոդեխի մունիցիպալիտետ – 1

Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, բռնությունից պաշտպանության ազգային ցանց ոչկառավարական կազմակերպության հետ համագործակցությամբն ՄԱԿ-ի կանանց կազմակերպության ֆինանսավորմամբ, շարունակում է իրավապահների որակավորման բարձրացումը կանանց և/կամ ընտանիքում բռնության դեմ պայքարի իրավական մեխանիզմների մասին: Նշված համագործակցության շրջանակներում, ուստիկանների ուսուցում է իրականացվում Վրաստանի բոլոր տարածաշրջաններում: 2018 թվականի հունվար-դեկտեմբերի դրությամբ, ուսուցման դասընթաց անցավ 325 պարեկ-տեսուչ և թաղային տեսուչը: Այդ թվում վերապատրաստվեց 25 թաղային տեսուչ Մառնեուլիից և 25 թաղային տեսուչ՝ Ասպինձայից: 2018 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ վերը նշված ուսուցում անցավ 50 խումբ, 797 ունկնդիր (այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ՝ 15 ունկնդիր):

- ❖ Պարեկ-տեսուչների պատրաստության հատուկ մասնագիտական կրթական ծրագիր – 5 խումբ, 63 ունկնդիր: Այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 2 ունկնդիր (հայ և ադրբեջանցի),
- ❖ Թաղային տեսուչների պատրաստության հատուկ մասնագիտական կրթական ծրագիր – 5 խումբ, 65 ունկնդիր: Այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 2 ունկնդիր (ուկրաինացի և եզդի),
- ❖ Դեդեկտիվ-քննիչի հատուկ մասնագիտական կրթական ծրագիր – 4 խումբ, 75 ունկնդիր: Այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 1 ունկնդիր (ադրբեջանցի),
- ❖ Ժամանակավոր տեղակայման մեկուսարանների աշխատակիցների պատրաստության-վերապատրաստության ուսումնական դասընթաց – 8 խումբ, 119 ունկնդիր, այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 1 ունկնդիր (հայ),
- ❖ Սահմանային ուստիկանության ցամաքային սահմանի պաշտպանության դեպարտամենտի սահմանապահների պատրաստության հատուկ մասնագիտական կրթական ծրագիր – 6 խումբ, 90 ունկնդիր, այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 4 ունկնդիր (1 ռուս, 2 ադրբեջանցի, 1 հայ),
- ❖ Քրեական ուստիկանության տարածքային մարմինների իրավակարգապահության սպայի վերապատրաստման դասընթաց – 4 խումբ, 66 ունկնդիր,

- ❖ Պարեկային ոստիկանության դեպարտամենտի զբոսաշրջային անվտանգության հետիոտն պարեկների բազիսային պատրաստության հատուկ կրթական ծրագիր – 7 խումբ, 123 ունկնդիր: Այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 3 ունկնդիր (ադրբեջանցի),
- ❖ Վրաստանի ներքին գործերի նախարարության պարեկային ոստիկանության դեպարտամենտի ծառայողների պաշտոնետության պաշտոնի բարձրացման հատուկ վերապատրաստման դասընթացի ուսումնական ծրագիր – 4 խումբ, 68 ունկնդիր: Այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 1 ունկնդիր (ադրբեջանցի),
- ❖ Սահմանապահ – վերահսկիչների պատրաստման հատուկ մասնագիտական կրթական ծրագիր – 4 խումբ, 73 ունկնդիր: Այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 1 ունկնդիր (հայ),
- ❖ Վրաստանի ներքին գործերի նախարարության կենտրոնական քրեական ոստիկանության դեպարտամենտում և տարածքային մարմիններում պաշտոնետության պաշտոնի բարձրացման հատուկ վերապատրաստման դասընթաց – 3 խումբ, 55 ունկնդիր:

2018 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ՀԻԲԱ – Վրաստանի ՆԳՆ ակադեմիա ընդունվեց 42 էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ ունկնդիր, այդ թվում ազգությամբ հայ՝ 21, ազգությամբ ադրբեջանցի՝ 14, ազգությամբ եզդի՝ 4, ազգությամբ ուկրաինացի՝ 2, ազգությամբ ռուս՝ 1:

1.2.1.12 Տեղեկատվական հանդիպումներ գենդերային հավասարության թեմատիկայով էթնիկ խմբերի հետ - Ո(Ո)ԻԱ «Բաթումի մշակույթի կենտրոնին կից գոյություն ունեցող «Բարեկամության տան» անդամների հետ՝ տարբեր համայնքներից

2018 թվականի ընթացքում, ամիսը մեկ անգամ, ք. Բաթումի «Բարեկամության տանը» «Կանանց ակումբի» ներկայացուցիչների հետ անց էին կացվում տեղեկատվական բնույթի հանդիպումներ գենդերային հավասարության թեմատիկայով: Նշված հանդիպումների գլխավոր նպատակը ներկայացնում էր կանանց տնտեսական ամրապնդումը, նրանց նկատմամբ բռնության կրճատումը/կանխումը, մանկապարտեզներում երեխաների տեղավորման աջակցությունը և այլն: Տարվա ընթացքում տեղի ունեցավ 12 հանդիպում: Աջակցություն ցուցաբերվեց գենդերային հիմնադրույթներով աշխատող ոչկառավարական կազմակերպությունների հետ պլանավորված հանդիպումներին/թեմատիկ վարժանքներին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց ընդգրկվածությանը: Նույնպես 2018 թվականի ընթացքում անցկացվեց 3 տեղեկատվական բնույթի հանդիպում գենդերային հավասարության թեմատիկայի շուրջ տարբեր էթնիկ խմբերի հետ:

Ք.Բաթումի «Բարեկամության տան» կողմից, 2018 թվականի սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին տեղի ունեցավ 2 տեղեկատվական հանդիպում, որը ենթադրում էր ՀԻԲԱ Աջարիայի իրավաբանական օգնության բյուրոյի փաստաբանների հրավեր և շնորհանդեսի անցկացում կանանց իրավունքների և ընտանիքում կանանց նկատմամբ բռնության հարցերի մասին: Հանդիպումը նախատեսում էր նաև համապատասխան իրավական խորհրդատվությունների անցկացում:

1.2.1.13 Քաղաքացիական կրթության ուղղությամբ ուսուցիչների և դասղեկների վերապատրաստում բուլինգի կանխման և հանդուրժողական մշակույթի խրախուսման, ինչպես նաև գենդերային հավասարության հարցերի մասին

Հաշվետու ժամանակաշրջանում «Դպրոցներում բուլինգի կանխարգելում և հանդուրժողական մշակույթի զարգացման աջակցություն» մոդուլով վարժանք անցան 6142 քաղաքացիական կրթության մանկավարժ և դասղեկ:

1.2.1.14 Ուսուցիչների օժանդակ գործնական ռեսուրսի պատրաստում գենդերային մեյնստրիմինգի մասին, նպատակային հանդիպումների կազմակերպում նշված ռեսուրսի արմատավորման աջակցության նպատակով

Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնն իրականացնում է միջոցառումներ դպրոցներում ժողովրդավարական մշակույթի ապահովման աջակցության համար: Գենդերային մեյնստրիմինգը այս ուղղության բաղկացուցիչ մասերից մեկն է: Նշված տեսանկյունից, Եվրոպայի խորհրդի հետ համագործակցությամբ, պատրաստվեց ուսուցիչների և կրթության մասնագետների օժանդակ երեք հատորյակ, որոնք ներկայացվեցին մանկավարժներին ուսուցիչների VI ազգային կոնֆերանսում (մասնակիցների թվաքանակը 140): Նույնպես «Մարդու իրավունքների դասավանդման կենտրոնի հետ համագործակցությամբ անցկացվեց ուսուցիչների մարզիչների վարժանք՝ գենդերային հավասարության մասին (մասնակիցների թվաքանակ – 15 մարզիչ):

1.2.1.15 «Երիտասարդները գենդերային հավասարության համար» նախագծի շրջանակներում գենդերային հավասարության մասին վարժանքների/հանդիպումների անցկացում էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում

Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի համատեղ նախագծի շրջանակներում կամավոր հասակակից լուսավորիչները ընտանիքում բռնության և վաղ ամուսնությունների թեմայի շուրջ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող տարածաշրջաններում անցկացրեցին հանդիպումներ տարբեր թիրախային խմբերի՝ աշակերտների, ուսուցիչների, ծնողների, համայնքի առաջնորդների հետ: Հատկանշական է, որ հանդիպումներն անցկացվեցին պետական լեզվով, անհրաժեշտության դեպքում որպես օժանդակ լեզու կիրառվում էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մայրենի լեզուն: Էթնիկ փոքրամասնությունների լեզուներով պատրաստվեցին և տարածվեցին համապատասխան նյութերը: Նախագծի շրջանակներում ձևավորված շարժական խմբի անդամները 3 տարածաշրջանի 11 մունիցիպալիտետի 68 գյուղերում անցկացրեցին 120 վարժանք (3465 բենեֆիցիար): Երիտասարդ մարզիչները տեղացիների հետ հանդիպումների ժամանակ քննարկում էին այնպիսի թեմաներ, ինչպիսիք էին գենդերային կարծրատիպերը, ընտանիքում բռնության դրսևորումները երեխաների նկատմամբ, ընտանիքում բռնության ձևերը, ընտանիքում բռնություն առաջացնող պատճառները, ուղղորդման մեխանիզմները – թեժ գիծ և պետական սերվիսներ և այլն:

1.2.1.16 Հանդիպում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց հետ տնտեսական կարողությունների ամրապնդման նպատակով

Պետական նախարարի աշխատակազմի և ՀԻԲ Ֆինանսների նախարարության ակադեմիայի համատեղ նախաձեռնության շրջանակներում, Քվեմո Քարթլիի տարածաշրջանում բնակվող կանանց համար անցկացվեց ուսումնական դասընթաց «Ինչպես սկսենք և զարգացնենք բիզնես»: Մրցույթի արդյունքում ընտրված տասնվեց մասնակցի հնարավորություն ընձեռվեց բարձրացնել տեսական գիտելիքը և զարգացնել ձեռներեցային գործունեությանը անհրաժեշտ գործնական ունակությունները: 16 շրջանավարտի փոխանցվեց համապատասխան հավաստագրեր:

1.2.1.17 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց համար գենդերային նշանով խտրականության մասին տեղեկատվական բնույթի աշխատանքային հանդիպումների և վարժանքների կազմակերպում

Ք. Թբիլիսիի սակրեբուլոյին կից գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի աջակցությամբ, «Ոչ ընտանիքում բռնությանը» նախագծի շրջանակներում խորհրդի կազմի մեջ մտնող «Բազմազգ Վրաստանի կանայք» կազմակերպությունը հանրային գործիչների համար անցկացրեց վարժանք «Գենդերային մեյնստրիմինգ տեղական ինքնակառավարությունում» թեմայով: Հանդիպումը ղեկավարում էին «Կանանց տեղեկատվական կենտրոն»-ի և «Գենդերային հավասարության ցանցի» որակյալ փորձագետները: Վարժանքին ընդգրկված էին 18 մասնակիցներ, այդ թվում էթնիկ փոքրամասնության 7 ներկայացուցիչ:

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ կանանց գենդերային հավասարության, ընտանեկան բռնությունից պաշտպանության մեխանիզմների և այս թեմայի հետ կապված օրենսդրական շրջանակների մասին հաղորդվեց տեղեկատվություն:

1.2.1.18 Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության հարցերի մասին, ինչպես նաև գոյություն ունեցող պետական սպասարկումների հանրաձանաչության նպատակով կրթական տեղեկատվական հանդիպումների կազմակերպում Թբիլիսիում և տարածաշրջաններում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ

Վրաստանի բնագրավված տարածքներից փախստականների, աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության կողմից, ՀԻԲ մարդու վաճառքի (թրեֆիկինգի) զոհերի, տուժածների պաշտպանության և օգնության պետական հիմնադրամի նախագծի՝ «Վրաստանում ընտանիքում բռնության կրճատման» նախագծի շրջանակներում վրացերեն, ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով պատրաստվեցին բրոշյուրներ, ստիկերներ և օրացույցներ, որոնց վրա տեղադրված էին բռնության դեմ հաղորդագրություններ և թեժ գծի համարը (116 006): Պատրաստված նյութերը, Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի, տեղական մունիցիպալիտետների և ՀԻԲ սոցիալական ծառայության գործակալության տարածքային միավորների հետ համագործակցությամբ տարածվեցին էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում:

Թեժ գծի միջոցով հնարավոր է խորհրդատվություն ստանալ ընտանիքում բռնության, կանանց նկատմամբ բռնության, մարդկանց վաճառքի (թրեֆիկինգի) և սեռական բռնության հարցերի մասին: Թեժ գծի մատչելիությունը վրաց լեզվից բացի ապահովված է լրացուցիչ 7 (անգլերեն, ռուսերեն, թուրքերեն, ադրբեջաներեն, հայերեն, արաբերեն և պարսկերեն) լեզուներով:

Հասկանալի է, որ թրեֆիկինգի դեմ պայքարի խորհրդի միասնական տեղեկատվական ռազմավարության շրջանակներում, 2018 թվականի մարտի 20-ին Պանկիսի կիրճի, Դուխի գյուղի հանրային նպատակների, տեղական բնակչության հետ մարդու վաճառքի (թրեֆիկինգի) գոհերի, տուժածների պաշտպանության և օգնության պետական հիմնադրամի ներկայացուցիչները անցկացրեցին տեղեկատվական հանդիպում մարդկանց վաճառքի (թրեֆիկինգի) հարցերի շուրջ: Հանդիպմանը ներկա էր 45 մասնակից:

2018 թվականին Վրաստանի Արդարադատության նախարարության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որը վերաբերում էր փողոցում բնակվող և/կամ աշխատող երեխաների թրեֆիկինգից պաշտպանության նպատակով հասարակության տեղեկացվածության բարձրացմանը, հաղթանակած ոչկառավարական կազմակերպությունը 10 մեծ քաղաքում, այդ թվում Ախալցխեում տեղեկատվական հանդիպումներ անցկացրեց տեղական բնակչության հետ: Տեղեկատվական հանդիպումների նպատակը ներկայացնում էր հասարակության իրազեկումը այն սպառնալիքների մասին, որոնք կապված են դեռահասների փողոցում կեցության և/կամ աշխատանքի հետ, նրանց ողորմություն տալով երեխաների փողոցում գտնվելը խթանելուն, ինչպես նաև տեղեկատվություն հաղորդվեց անապաստան երեխաների պաշտպանության նպատակով գոյություն ունեցող պետական մեխանիզմների և սերվիսների մասին: Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, պատրաստվեց տեսահոլովակ և տարածվեցին տեղեկատվական բրոշյուրներ 6 լեզուներով (վրացերեն, ռուսերեն, անգլերեն, ադրբեջաներեն, թուրքերեն և հայերեն):

Պետական հիմնադրամի «Վրաստանում ընտանիքում բռնության կրճատում»

(USAID) ծրագրի կանխարգելման բաղադրիչի շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ անցկացվեցին տեղեկատվական հանդիպումներ՝ կանանց նկատմամբ բռնության, ընտանիքում բռնության և հիմնադրամի գործունեության հարցերի մասին: Մասնավորապես, հանդիպումներ տեղի ունեցան Մառնեուլիի մունիցիպալիտետի, Թամարիսի գյուղի (մասնակիցների քանակը՝ 45), Ախալի Դիոկնիսի գյուղի (մասնակիցների քանակը՝ 20), Ախալցխիսեի մունիցիպալիտետի, Սխավիլիսի գյուղի (մասնակիցների քանակը՝ 25), Մեծ Պամաճի (մասնակիցների քանակը՝ 15), Ախմետայի մունիցիպալիտետի Ջոդոլո գյուղի (մասնակիցների քանակը՝ 40), Դուխի գյուղի (մասնակիցների քանակը՝ 45), Լագոդեխի մունիցիպալիտետի Գիորգեթի գյուղի (մասնակիցների քանակը՝ 35) Ափենի գյուղի դպրոցի աշակերտների (մասնակիցների քանակը՝ 30) հետ:

1.2.1.19 Կանանց ձեռներեցության հզորացում

Կանանց ձեռներեցության հզորացման նպատակով, Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի 2017 թվականի հուլիսի 21-ի №1-1-319 հրամանի հիման վրա, մասնավոր սեկտորի զարգացման աջակցության խորհրդատվական խորհրդին կից ստեղծվեց համապատասխան աշխատանքային խումբ, կանանց ձեռներեցության աջակցության ենթախորհուրդ: Ընդհանուր հաշվով, 2018 թվականի

հունվար-հուլիս ամիսներին տեղի ունեցավ կանանց ձեռներեցության աջակցության ենթախորհրդի մեկ նիստ:

- ❖ Քվեմո-Քարթլի տարածաշրջանում ֆինանսավորված բենեֆիցիարների 36.8% -ը կին էր (25),
- ❖ Կախեթի տարածաշրջանում ֆինանսավորված բենեֆիցիարների 52%-ը կին էր (80),
- ❖ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում ֆինանսավորված բենեֆիցիարների 30.6%-ը կին էր (41):

Միջանկյալ նպատակ. 1.3 Պետական վարչարարության և իրավապահ մարմինների և մեխանիզմների մատչելիության աճ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար - միջոցառումներ, ծրագրեր և նախագծեր իրականացվեցին հետևյալ խնդիրների շրջանակներում.

- ❖ **Խնդիր. 1.3.1** **Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում պետական լեզուն չգիտեցող քաղաքացիներին ըստ անհրաժեշտության աջակցություն ոչպետական լեզվով կազմված փաստաթղթերի թարգմանության գործում**
- ❖ **Խնդիր. 1.3.2** **Էթնիկ փոքրամասնությունների ընդգրկվածության բարելավում պետական լիազոր-նահանգապետերի վարչությունում**
- ❖ **Խնդիր. 1.3.3** **Հասարակական սերվիսների մատչելիության բարելավում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար**
- ❖ **Խնդիր. 1.3.4.** **Հանրային վարչարարությունում և հանրային ծառայությունում էթնիկ փոքրամասնությունների ընդգրկվածության աճ և մասնագիտական զարգացում**

2018 թվականի ընթացքում, մունիցիպալային մակարդակով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների դիմումներին արձագանքը տեղի էր ունենում օրենքով սահմանված ընթացակարգերի պաշտպանությամբ: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ քաղաքացիների համար չի ստեղծվել խոչընդոտ լեզվական պատնեշի պատճառով, անհրաժեշտության դեպքում տեղեկատվության հաղորդումն իրականացվում էր նրանց հասկանալի լեզուներով: Իսկ տեղական ինքնակառավարության գործունեությունում ընդգրկված էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ հանրային գործիչներին, անհրաժեշտության դեպքում տրվում էին համապատասխան բանավոր բացատրություններ մայրենի կամ նրանց հասկանալի լեզուներով:

Աջակցություն ցուցաբերվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկմանը տեղական մակարդակով: Մասնավորապես, 2018 թվականին էլ ավելի ակտիվացավ երկրամասային վարչություններին կից գոյություն ունեցող էթնիկ փոքրամասնությունների ընդգրկման ակտիվացման նպատակով ստեղծված խորհուրդների գործունեությունը: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները ակտիվորեն մասնակցում էին տարբեր ծրագրերի և առաջարկությունների քննարկմանը տեղական մակարդակով:

Տեղի ունեցավ լայնամասշտաբ տեղեկատվության/իրազեկության բարձրացման քարոզչություն հասարակական սերվիսների մասին: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ

բնակվող Քվեմո Քարթլիի, Կախեթի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջաններում անցկացվեցին հանդիպումներ տարբեր նպատակային խմբերի հետ:

2017 թվականի դեկտեմբերի 14-ին փոփոխություն մտցվեց «Հանրային հիմնարկությունում ստաժավորում անցնելու կանոնի և պայմանների մասին պետական ծրագրի հաստատման վերաբերյալ» Վրաստանի կառավարության

2014 թվականի հունիսի 18-ի №410 Որոշման մեջ: Մասնավորապես, սահմանվեցին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ հանրային հիմնարկություններում ստաժավորում անցնելու ընթացակարգերը: Իրականացված փոփոխությունների համաձայն, էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողներին, որոնք անցել են «Վրաց լեզվից պատրաստության հատուկ կրթական ծրագիր» հնարավորություն տրվեց հանրային կառույցներում ստաժավորում անցնելու ճանապարհով ձեռք բերելու պատշաճ փորձ և զարգացնելու մասնագիտական ունակություն-հմտությունները, ինչը օժանդակում է երիտասարդների ընդգրկմանը և քաղաքացիական ինտեգրմանը:

1.3.1.1. Պետական լեզվին չտիրապետող քաղաքացիներին աջակցություն հանրային հիմնարկություններ ներկայացվելիք ոչպետական լեզվով կազմված դիմումների և փաստաթղթերի թարգմանության գործում

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին չեն ստեղծվում հիմնախնդիրներ պետական լեզվին չտիրապետելու պատճառով, նրանց համապատասխան բացատրություններ տրվում են մայրենի կամ հասկանալի լեզուներով: Պետական լեզվի չիմացության պատճառով ստեղծված խոչընդոտների մասին ոչ մի բողոք չի ամրագրվել:

Խնդիր. 1.3.2


1.3.2.1. Կախեթի պետական լիազոր նահանգապետի վարչությանն առընթեր գործող քաղաքացիական ընդգրկվածության բարելավման խորհրդի նիստերի անցկացում

Կայացավ պետական լիազորի խորհրդակցական մարմնի՝ Կախեթի տարածաշրջանում փոքրամասնությունների քաղաքացիական ընդգրկման բարելավման խորհրդի նիստ: Խորհրդի նիստին, որին մասնակցում էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ բոլոր համապատասխան մունիցիպալիտետից, քննարկվեցին տարածաշրջանի ընթացիկ ծրագրերը և նախագծերը, ինչպես նաև տարածաշրջանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հրատապ հիմնախնդիրները: Խորհրդի նիստերին հանձնարարականի տեսքով խնդրվեց մունիցիպալիտետի ղեկավարներին, որ էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում ապահովվեն նախագծերի և նորույթների մասին տեղեկատվության տարածումը և մատչելիությունը, ինչպես նաև 2019 թվականի բյուջեում համապատասխան ֆինանսներ հայթայթվեն առկա հիմնախնդիրների կարգավորման նպատակով:

1.3.2.3-1.3.2.4 Ստաժավորման ծրագրի շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին ստաժավորման մեջ ընդգրկումը պետական լիազոր նահանգապետի

վարչության և տեղական ինքնակառավարման մարմիններում, տարբեր հիմնարկների կողմից հայտարարված ստաժավորման ծրագրերին Սամցխե-Ջավախեթի վարչության ընդգրկվածություն

1+4 ստաժավորման ծրագրի շրջանակներում ընտրված, 1+4 կրթական ծրագրի 142 մասնակից (իսկ 2017 թվականին, պիլոտային ծրագրի շրջանակներում՝ 65) երիտասարդ ստաժավորում անցավ տարբեր պետական հիմնարկությունում, այդ թվում տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային իրավունքի իրավաբանական անձերում:



1.3.2.5 Սամցխե-Ջավախեթի նահանգապետի վարչությունում հանրային գործիչների հաստիքային պաշտոններին հայտարարված մրցույթին մասնակցության նպատակով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցություն

Տարվա ընթացքում անց էին կացվում տեղեկատվական հանդիպումներ Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանում, որտեղ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին հաղորդվում էր համապատասխան տեղեկատվություն գոյություն ունեցող ազատ տեղերի կապակցությամբ:

1.3.2.6. Էթնիկ

փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում, քաղաքացիական ինտեգրման ուղղությամբ պետական քաղաքականությանը/էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավունքներին ծանոթության նպատակով անցկացվեցին հանդիպումներ

Տարվա ընթացքում քաղաքացիական ինտեգրման պետական քաղաքականությանը ծանոթության նպատակով հանդիպումներ անցկացվեցին Սամցխե-Ջավախեթում (Նինոծմինդա, Ախալքալաք, Ախալցխե), Քվեմո Քարթլիում (Մառնեուլի, Բոլնիսի, Դմանիսի, Ծալկա, Գարդաբանի), Կախեթում՝ (Պանկիսի կիրճ, Լագոդեխի, Սագարեջո, Թելավի):

1.3.2.7 Էթնիկ փոքրամասնությունների խորհրդի անդամների ընդգրկվածության աճ ք. Թբիլիսիի Սակրեբուլոյի գործունեությունում

2019 թվականի ք.Թբիլիսիի զարգացման գլխավոր պլանի և Սակրեբուլոյի բյուջետավորման գործընթացում ակտիվորեն էին ընդգրկված էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

Խնդիր. 1.3.3

1.3.3.1 Պետական սերվիսների և ընթացիկ պետական ծրագրերի (հոգեբանա-սոցիալական վերականգնման ծրագրեր, կրթության ծրագրեր, մոտակա օրենսդրական կարգավորումներ) մասին էթնիկ փոքրամասնությունների լեզուներով պատրաստված տեղեկատվական նյութերի տարածում տարածաշրջաններում

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների հասարակական սերվիսներին մատչելիության մեծացման նպատակով, 2018 թվականի հունվարից հուլիս ամսվա ընդգրկմամբ, էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում, Վրաստանի Արդարադատության նախարարությունը ապահովեց հասարակական սերվիսների և ընթացիկ պետական ծրագրերի մասին տեղեկատվական նյութերի տարածումը: Նշված նյութերը տարածվեցին հասարակական կենտրոնների, պետական սերվիսների զարգացման գործակալության տարածքային ծառայությունների և Արդարադատության տան միջոցով:

Պետական նախարարի աշխատակազմի կողմից կազմակերպված լայնամասշտաբ տեղեկատվական քարոզչության ճանապարհով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին (Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլի, Կախեթի) հաղորդվեց տեղեկատվություն պետական սերվիսների և ծրագրերի մասին, այդ թվում գյուղատնտեսության և բնապահպանության, առողջապահության և սոցիալական պաշտպանության, տնտեսական և ֆինանսական ծրագրերի և նորությունների մասին (անցկացվեց 50-ից ավելի հանդիպում):

1.3.3.2 Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում Արդարադատության տների թվաքանակի աճի աջակցություն էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող վարչական միավորներում, արդարադատության տների շինարարության աջակցություն (համապատասխան փաստաթղթերի պատրաստում, հողատարածքի հատկացում)

Ք. Ախալքալաքում բացվեց Արդարադատության տուն, ինչպես նաև հասարակական կենտրոններ բացվեցին Ախալցխի մունիցիպալիտետի Ածղուրի գյուղում և Ադիգենի մունիցիպալիտետի Ադիգեն ավանում: Մունիցիպալիտետներն իրենց միջոցներով ապահովեցին նշված տների տարածքների բարեկարգումը:

1.3.3.3 Հասարակական սերվիսների և ընթացիկ պետական ծրագրերի (հոգեբանա-սոցիալական վերականգնման ծրագրեր, կրթական ծրագրեր, մոտակա օրենսդրական կարգավորումներ) մասին տեղեկատվության հաղորդում մեղադրյալ/դատապարտյալներին

Պատժակատարողական համակարգում 2018 թվականի ընթացքում հոգեբանա-սոցիալական վերականգնման և կրթության ծրագրերում ընդգրկված էր ընդամենը 3460 բենեֆիցիար: Այդ թվում

այլ դատապարտյալների հետ միասին, ակտիվորեն ընդգրկված էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ դատապարտյալները.

Օրագրի տեսակ	Մասնակիցների թվաքանակ
Ընդհանուր կրթություն	144
Բարձրագույն կրթություն	38
Մասնագիտական կրթություն (վարկերով՝ կրեդիտներով)	218
Մասնագիտական կրթություն (հավաստագրային)	507
Կրթական վարժանք-ծրագրեր	480
Հոգեբանա-սոցիալական վարժանքներ	766
Հոգեբանա-սոցիալական թերապիա	1307

1.3.3.4 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ մեղադրյալ/դատապարտյալների իրազեկում իրենց իրավունքների մասին

Կալանավորների իրավունքների մասին նորացված տեղեկատվության հիման վրա ստեղծվեցին տեքստային տեսահոլովակներ, որոնք մատչելի են բոլոր հիմնարկություններում մեղադրյալ/դատապարտյալներին հեռուստատեսային ալիքի միջոցով: Նաև բոլոր պատժակատարողական հիմնարկության սոցիալական բաժնում գոյություն ունեն մեղադրյալ/դատապարտյալների իրավունքների մասին տեղեկատվության էլեկտրոնային տարբերակներ հինգ լեզուներով. ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն, թուրքերեն և անգլերեն: Պահանջի դեպքում ցանկալի լեզվով նշված տեղեկատվությունը հասանելի է տպագիր տեսքով:

1.3.3.5 Տեղեկատվական քարոզչություն Վրաստանի եվրոինտեգրման գործընթացի մասին

Հաշվետու ժամանակաշրջանում ՀԻԲԱ «ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնի» գլխավոր ուղղություններից մեկը ներկայացնում է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջանների բնակչության իրազեկումը Վրաստանի եվրոպական և եվրոատլանտյան ինտեգրման գործընթացի մասին: Էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ քաղաքացիների համար անցկացվեց շուրջ 40 միջոցառում, որի շրջանակներում շուրջ 4065 էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչների հետ կայացավ ուղիղ հաղորդակցություն: Հանդիպումներ անցկացվեցին էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող հետևյալ մունիցիպալիտետներում. Մառնեուլի, Բոլնիսի, Ախալցխիսե, Ախալքալաքի, Նինոծմինդա, Թեթրիժղարո և այլն:

Մամցիսե-Ջավախեթում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար անցկացվեցին տարբեր տեսակի ակտիվություններ (մրցույթներ, համերգ, ցուցահանդես, տեղեկատվական գործողություն, ուսումնական այց Քուրթախի ռազմական հենակայան, հանդիպումներ, սեմինարներ), տեղեկատվական հանդիպումների շրջանակներում էթնիկ փոքրամասնությունների շուրջ

2000ներկայացուցչի հաղորդվեց տեղեկատվություն Եվրամիության հետ առանց այցեհրավերի տեղաշարժի, ասոցիացման համաձայնագրի և ազատ առևտրի մասին:

1.3.3.6 «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագծի շրջանակներում վարժանքների/հանդիպումների անցկացում էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում

Նախագիծն իրականացվեց Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի և Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի համատեղ նախաձեռնության շրջանակում, որին աջակցում է ՀԻԲԱ «ՆԱՏՕ-ի և Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնը»: Նախագծի նպատակը ներկայացնում է Վրաստանի՝ ՆԱՏՕ և Եվրամիություն ինտեգրման գործընթացի մասին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի, Կախեթի) տեղեկատվության մատչելիությունը նրանց հասկանալի լեզուներով: Երիտասարդներից կազմված շարժական խումբը (30 մասնակից), որի անդամներն անցան նրանց համար հատուկ պլանավորված թեմատիկ դպրոց, Քվեմո Քարթլիի, Կախեթի և Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանների բնակիչներին մատուցեցին տեղեկատվություն Վրաստանի եվրոինտեգրման գործընթացի և դրանից բխող շահերի մասին: Երեք տարածաշրջանների 10 մունիցիպալիտետի 56 գյուղում անցկացվեց 80 վարժանք (2133 բենեֆիցիար):

1.3.3.7 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար տեղեկատվական հանդիպումների կազմակերպում և նրանց ծանոթացում սակրեբուլոյի գործունեությանը

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների խորհրդի բազայի վրա ստեղծվեց երիտասարդական կազմակերպություն, որն ընդգրկված է մայրաքաղաքի սակրեբուլոյի երիտասարդական քաղաքականության իմպլեմենտացիայի գործընթացին: Սակրեբուլոյի սպորտի և երիտասարդության գործերի հանձնաժողովի կազմակերպմամբ, Թբիլիսիում տեղի ունեցավ առաջին երիտասարդական համաժողովը, որին մասնակցեցին մայրաքաղաքում բնակվող էթնիկ փոքրամասնության չորս (ուկրաինացի, ասորի, հայ, ադրբեջանցի) ներկայացուցիչներ:

1.3.3.9 Առողջության աջակցության պետական ծրագրի շրջանակներում – առողջության աջակցության հարցերով կրթական և տեսա նյութերի պատրաստում/տարածում

Տպագրվեցին ժողովրդականացման և լուսավորչական նյութեր, ծխախոտ արգելող նշաններ, ֆլայերներ և բրոշյուրներ, մասնավորապես պատրաստվեցին երկու տեսահոլովակ հայերեն և ադրբեջաներեն սուբտիտրերով:

- ❖ Առողջության աջակցության պետական ծրագրի C հեպատիտի,
- ❖ «Օխախոտ օգտագործելու վերահսկողության ուժեղացման» բաղադրիչի շրջանակներում

Էթնիկ փոքրամասնությունների (հայերեն և ադրբեջաներեն) լեզուներով պատրաստվեցին:

- ❖ Ֆլայեր ծխախոտի վերահսկողության նոր կարգավորումների մասին (500 օրինակ),
- ❖ Բրոշյուր (500-ական օրինակ),
- ❖ Ֆլայեր (Օխախոտի վնասակարություն) 200-ական օրինակ,
- ❖ Օխելն արգելող նշաններ (ստիկերներ) 250-ական օրինակ,
- ❖ «Հոգեկան առողջության օժանդակման և նյութերից կախվածության կանխարգելման» բաղադրիչի շրջանակներում հայերեն և ադրբեջաներեն լեզուներով պատրաստվեցին կրթական բուկլետներ հոգեբուժական առողջության թեմատիկայով (1500-ական օրինակ):

1.3.3.10. Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների գիտակցության բարձրացում աշխատանքի և զբաղվածության ոլորտում իրականացված բարեփոխումների մասին

Զբաղվածության աջակցության թեմայով պատրաստվեցին և էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում տարածվեցին տեղեկատվական բրոշյուրներ հայերեն և ադրբեջաներեն լեզուներով (500-ական միավոր), ինչպես նաև սկսվել է աշխատանքային իրավունքների վերաբերյալ (500-ական միավոր) տեղեկատվական բրոշյուրների տարածումը էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում, որը կշարունակվի 2019 թվականին:

1.3.3.11 Հաղորդումների ծրագրերի, էլեկտրոնային/տպագիր և սոցիալական մեդիայի միջոցներով տեղեկատվության տարածում զբոսաշրջության ոլորտում գոյություն ունեցող նորույթների և զարգացման միտումների մասին

Զբոսաշրջության ազգային վարչությունը ամբողջ տարվա ընթացքում ապահովում է զբոսաշրջության ոլորտում գոյություն ունեցող նորույթների մասին տեղեկատվության տարածումը, ինչպիսին է նոր զբոսաշրջային արտադրանք, միջոցառումներ, նոր զբոսաշրջային օբյեկտներ, զբոսաշրջային առաջարկություններ և այլն: Տեղեկատվության մատուցումը կատարվում է վարչության բազայում գոյություն ունեցող զբոսաշրջային օբյեկտների համար (հյուրանոց, սննդի օբյեկտ, զբոսաշրջային աստակցիա և այլն): Տարածված տեղեկատվությունը (2018 թվականի հունվար-հուլիսի տվյալներով) կազմում է ընդհանուր առմամբ 163:

1.3.4.4 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնագիտական զարգացման և հանրային ծառայությունում ընդգրկվածության աճ

Դիտք՝ 3.4.1.3.

1.3.4.5 Ստաժավորման ծրագիր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար Թբիլիսիի սակրեբուլոյում

Թբիլիսիի Սակրեբուլոյի իրավաբանական և կազմակերպչական բաժիններում եռամսյա ստաժավորման դասընթաց անցավ էթնիկ փոքրամասնությունների երեք ներկայացուցիչ:

Միջանկյալ նպատակ. 1.4 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության խրախուսում քաղաքական որոշումների ընդունման գործընթացում

Խնդիր. 1.4.1 Էթնիկ փոքրամասնությունների կողմից ձայն տալու և իրազեկված ընտրություն կատարելու ապահովում

2018 թվականին անցկացված նախագահական ընտրություններին ապահովված էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընտրություններին հավասար և ակտիվ մասնակցությունը: Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող 12 ընտրատարածքային հանձնաժողովներում ստեղծվել էին 346 ընտրատեղամասեր. վրաց-ադրբեջանական՝ 209 տեղամաս, վրաց-հայկական՝ 133 տեղամաս, վրաց-հայկական-ադրբեջանական՝ 4 տեղամաս:

Վրաստանի զանգվածով, վարժանքներ անցկացվեցին ընտրատեղամասային հանձնաժողովի 43352 անդամի, այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 1639 անդամի (ազգությամբ հայ՝ 762 անդամ, ազգությամբ ադրբեջանցի՝ 877 անդամ) համար,

1.4.1.1 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների իրազեկում

Նախագահի ընտրությունների համար, ԿԸՀ-ն ապահովեց էթնիկ փոքրամասնություններին մատչելի սերվիսների մասին հատուկ տեղեկատվական տեսահոլովակի պատրաստումը, որը թարգմանվեց հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Դրա հետ միասին, ԿԸՀ-ի կողմից պատրաստվեցին բոլոր տեղեկատվական տեսահոլովակները (15 տեսահոլովակ), թարգմանվեցին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով, որոնք տեղադրվեցին տարածաշրջանային հեռուստատեսությունների եթերում:

ԿԸՀ-ն ապահովեց հայալեզու «Վրաստան» թերթում և ադրբեջանալեզու «Գուրջիստան» թերթում մատչելի սերվիսների և քվեարկության օրվա ընթացակարգերի մասին տեղեկատվության հրապարակումը: ԿԸՀ-ի հեռախոսային/տեղեկատվական կենտրոնում ընտրողները տեղեկատվություն կարող էին ստանալ հայախոս և ադրբեջանախոս օպերատորներից, ովքեր ապահովում էին ընտրության հետ կապված հարցերով հետաքրքրվող անձանց իրազեկումը: Զբաղված էր էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 4 օպերատոր (2-հայ, 2-ադրբեջանցի):

ԿԸՀ-ի պաշտոնական կայք-էջին (www.cesko.ge) հոծ բնակվող տարածաշրջաններում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողները համընդհանուր ընտրացուցակում սեփական տվյալները վերստուգել կարող էին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Նույնպես կայք-էջին «Էթնիկ փոքրամասնություններ» բաների վրա տեղադրված էին հայերեն և ադրբեջաներեն թարգմանված տարբեր փաստաթղթեր:

1.4.1.2 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրողների իրազեկումը քվեարկության օրվա ընթացակարգերի մասին

Տեղեկատվական ընթացակարգ «Զրուցում ենք ընտրողների հետ»

2018 թվականին ընտրական վարչությունն իրականացրեց ընտրողների տեղեկատվության ընթացակարգ. «Զրուցում ենք ընտրողների հետ», որը ինչպես Վրաստանում, այնպես էլ

արտասահմանում գտնվող Վրաստանի քաղաքացիների համար նախատեսում էր Վրաստանի նախագահի ընտրության մասին իրազեկվածության բարձրացում, ընտրական վարչության հետ հաղորդակցության բարելավում և առաջարկված սերվիսների մասին տեղեկացվածություն:

Տեղեկատվական քարոզչությունն իրականացվեց երկու փուլով: Քարոզչության առաջին փուլում (մայիս-հունիս ժամանակաշրջան) 73 ընտրատարածքային հանձնաժողովի 335 անդամ և 400 կամավոր մունիցիպալիտետների կենտրոնների և գյուղերի հասարակական կուտակման վայրերում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում, անցկացրեցին 263 հանդիպում, իսկ 73 ընտրատարածքային հանձնաժողովի նախագահ՝ 76 հանրային հանդիպում: Ընտրողներին և ընդգրկված կողմերին ծանոթացրին տեղեկատվությանը ընտրական իրավունքի, նախագահական ընտրությունների, ընտրական գործընթացի, ընտրությունների պատմության և ընտրական վարչության գործունեության մասին: Ընտրատարածքային հանձնաժողովներում անցկացված հանդիպումներին մասնակցություն ունեցավ 1681 շահագրգիռ անձ:

Ընթացակարգի առաջին փուլում տարածվեց տեղեկատվական ֆլայեր ընտրական հանձնաժողովի կողմից առաջարկված սերվիսների և առաջին ժողովրդավարական ընտրությունների 100-ամյա հոբելյանի մասին:

Ընթացակարգի երկրորդ փուլում (սեպտեմբեր-հոկտեմբեր) ընտրական վարչության ներկայացուցիչները համընդհանուր ընտրացուցակում անձնական տվյալների վերստուգման նպատակով, Թբիլիսիում և տարածաշրջաններում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում, անցկացրեցին 97 ակցիա «Գտիր քո անձը, գտիր քո թաղամասը»: Գործողությունների շրջանակներում նրանք բջջային հեռախոսի, պլանշետի և արագ վճարման սարքի կիրառմամբ օգնեցին անձնական տվյալների և ընտրատեղամասի տեղադրության վերստուգման մեջ, բաժանեցին տեղեկատվական ֆլայերներ և ԿԸՀ-ի բրենդացված արտադրանքը:

Այս տարի առաջին անգամ պլանավորվեց նոր նախաձեռնություն ընտրություններում երիտասարդների մասնակցությունը խրախուսելու համար և նշված ընթացակարգի շրջանակներում, այն երիտասարդները, ովքեր առաջին անգամ էին մասնակցում ընտրություններին, գրանցման տեղի համաձայն, ստացան ԿԸՀ նախագահի գրավոր կոչը: Հատկանշական է, որ ընթացակարգի շրջանակներում տարածված բոլոր տեղեկատվական նյութերը թարգմանված էին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

Ընթացակարգի շրջանակներում ընտրական հարցերի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով ԿԸՀ-ն երիտասարդներին առաջարկեց նոր սերվիս: Թբիլիսիի և տարածաշրջանների 24 բարձրագույն ուսումնական հաստատությունում տեղադրվեցին հատուկ պաստառներ, որոնց վրա արտացոլված էր արագ արձագանքի գաղտնագիրը (QR Code): ԿԸՀ-ի կայք-էջի վրա երիտասարդների համար ստեղծվեց հատուկ բաներ և QR գաղտնագրի բջջային ապլիկացիայով տեսաձրեկուց (սկան անելուց) հետո, երիտասարդները կարող էին ստանալ տեղեկատվություն հետևյալ հարցերի մասին. Վրաստանի նախագահի ընտրություններ, ձայնի իրավունք, ձայն տալու ընթացակարգեր, էլեկտրոնային ընտրական գրադարան, Վրաստանի ընտրությունների պատմություն, գենդերային վիճակագրություն, կրթական նախագծեր և ընտրական վարչության այլ նշանակալից գործողություններ:

ԿԸՀ-ի ներկայացուցիչները հանդիպումներ անցկացրեցին Մառնեուլիի շրջանի Կապանախչ գյուղում և Նինոծմինդայի մունիցիպալիտետում բնակվող կանանց հետ: Հանդիպման նպատակը ներկայացնում էր աջակցությունը կանանց ընդգրկումը ընտրական գործընթացներին: Հանդիպմանը մասնակցություն ունեցավ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 100 կին:

1.4.1.3 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ընտրական փաստաթղթերի հայերեն և աղբբեջաներեն թարգմանություն

Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջանների հայալեզու և աղբբեջանալեզու ընտրողների համար, վրացերեն-հայերեն և վրացերեն-աղբբեջաներեն լեզուներով թարգմանվեցին և տպագրվեցին ընտրական քվեաթերթիկներ, ընտրական համընդհանուր ցուցակը, քվեաթերթիկը լրացնելու կարգը և քվեարկությանը մասնակցությունն արտացոլող պոստեր:

Հայալեզու և աղբբեջանալեզու ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների համար նաև թարգմանվեցին և տպագրվեցին հետևյալ փաստաթղթերը.

- ❖ Ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների օժանդակ հրահանգ,
- ❖ Ընտրատեղամասային հանձնաժողովի նախագահի հուշաթերթի հրահանգ,
- ❖ Ընտրատեղամասային հանձնաժողովի քարտուղարի իրավասությունները քվեարկության օրը,
- ❖ Ընտրողների հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի գործառույթները,
- ❖ Ընտրողներին գրանցող հանձնաժողովի անդամի գործառույթները,
- ❖ Ընտրատուփի և հատուկ ծրարների հանձնաժողովի վերահսկիչ անդամի գործառույթները,
- ❖ Փոխադրական ընտրատուփն ուղեկցող հանձնաժողովի անդամի գործառույթները,
- ❖ Ուսումնական մոդուլ ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների համար՝ ընտրությունների անվտանգություն,
- ❖ Հրահանգ և տեսահոլովակ ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների համար ՆԳՆ ընտրողների հետ զրույցի վարքի և վարվելաձևի նորմերի պահպանության մասին,
- ❖ Ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների ուսումնական ֆիլմ «Քվեարկության օրվա ընթացակարգեր» սուբտիտրերով հայերեն և աղբբեջաներեն լեզուներով:

1.4.1.4 Փոքր դրամաշնորհների հատկացում քաղաքացիական կազմակերպություններին և փոքրամասնությունների համայնքներին – ընտրությունների նշանակության մասին տեղեկատվական քարոզչություն վարելու և ընտրական մշակույթնուժեղացնելու նպատակով

2018 թվականին ԿԸՀ-ն դրամաշնորհային մրցույթի ֆինանսավորման առաջնահերթային ուղղություն սահմանեց ընտրական գործընթացում խոցելի խմբերի, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների մասնակցության աջակցությունը: ԿԸՀ-ին կից գործող ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխման և ուսուցման կենտրոնը (Ուսուցման կենտրոն), դրամաշնորհային հանձնաժողովի

որոշմամբ, ֆինանսավորեց ոչկառավարական կազմակերպությունների 10 նախագիծ, որոնք իրականացվեցին էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում: Նախագծերի բյուջեն կազմեց 219 062 լարի:

1.4.1.5. Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ընտրատեղամասային հանձնաժողովի անդամների պատրաստություն ընտրական ընթացակարգերի կապակցությամբ

Վրաստանի զանգվածով, վարժանքներ անցկացվեցին ընտրատեղամասային հանձնաժողովի 43 352 անդամի համար, այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 1639 անդամի, այստեղից հայ՝ 762 անդամ, ադրբեջանցի՝ 877 անդամ: Ընտրատեղամասային հանձնաժողովի հայալեզու և ադրբեջանալեզու անդամները, վարժանքների հայեցակարգին համապատասխան, անցան իննտենսիվ ուսումնական դասընթաց: Վարժանքն ընդգրկում էր չորս փուլ.

- ❖ Հրահանգ ընտրատեղամասային հանձնաժողովի ղեկավար անձանց ընտրության կանոնի կապակցությամբ,
- ❖ Ընտրական հանձնաժողովների լրիվ կազմի ուսուցում, որի շրջանակներում քննարկվեցին մինչև քվեարկության օրը և քվեարկության օրը ընտրատեղամասային հանձնաժողովի իրավասությանը պատկանող հարցերը,
- ❖ Ընտրական հանձնաժողովների ղեկավար անձանց (նախագահ, տեղակալ, քարտուղար) ուսուցման և ուսումնական ծրագիրը ներառում է ընտրատեղամասային հանձնաժողովի ղեկավար անձանց իրավասությունների քննարկումը, ինչպես նաև ինտեգրված էին նորացված ուսումնական մոդուլներ՝ վեճերի վարում և ընտրությունների անվտանգություն, որոնք ՀԻԻԱ Ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխման և ուսուցման կենտրոնն է (Ուսուցման կենտրոն) մշակել:
- ❖ Միմուլյացիոն ուսուցում քվեարկության օրվա դրվագային բեմականացման ձևաչափով:

1.4.1.6 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար կրթական ծրագրերի իրականացում

- ❖ Ընտրական զարգացման դպրոց 18-24 տարեկան երիտասարդների համար,
- ❖ Ընտրությունները և երիտասարդ ընտրող XI-XII դասարանի աշակերտների համար,
- ❖ Ընտրական ադմինիստրատորի դասընթաց,
- ❖ Ուսումնական դասընթաց ընտրական իրավունքի ճյուղում՝ Ախալցխի համալսարանի ուսանողների համար

Կրթական նախագիծ «Ընտրական զարգացման դպրոց»

ԿԸՀ-ն և ուսուցման կենտրոնը, Եվրոպայի խորհրդի (CoE) և ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի (IFES) աջակցությամբ, Թբիլիսիի և Վրաստանի 23 մունիցիպալիտետներում իրականացրեցին «Ընտրական զարգացման դպրոց» նախագծի հերթական փուլը: 18-24 տարեկան երիտասարդների համար անցկացվեց տասնօրյա ուսուցում 25 «Ընտրական զարգացման դպրոցում» և նրանք ծանոթացան հետևյալ հարցերին. Ընտրական համակարգեր, ընտրական վարչություն, 1919 թվականին հիմնադրված ժողովի ընտրություններ, ժողովրդավարական ընտրական սկզբունքներ,

ընտրական մարմինները Վրաստանում, ընտրություններին ընդգրկված կողմեր, ընտրությունների թափանցիկություն և մատչելիություն և գենդերային հավասարություն:

Նախագծի 33 առաջադեմ շրջանավարտներին ԿՀՀ-ն երկամսյա ժամկետով աշխատանքի ընդունեց ընտրական գործընթացների կառավարման դեպարտամենտում, նրանցից 10-ը Թբիլիսիի, իսկ 23-ը այլ ընտրատարածքների հանձնաժողովներում անցան պրակտիկա և ձեռք բերեցին ընտրական փորձ:

25 ընտրական զարգացման դպրոց իրականացվեցին Թբիլիսիում և 23 մունիցիպալիտետում, այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում, ինչպես նաև բաժանող գծին հարակից գյուղերում: Մասնակցություն ունեցավ 472 երիտասարդ, այդ թվում 311 (66%)-ը կին էր և 161 (34%) – ը տղամարդ:

Ուսումնական նախագիծ «Ընտրական ադմինիստրատորի դասընթացներ»

ԿՀՀ-ն և ուսուցման կենտրոնը իրականացրեցին նախագիծ. «Ընտրական ադմինիստրատորի դասընթացներ» նորացված հայեցակարգով, որը նախատեսում էր ուսումնական դասընթացի անցկացում պրոֆիլային ծրագրերով: Ծրագիրն իրականացվեց ընտրական հարցերում քաղաքացիական գիտակցության բարձրացման և ընտրական վարչությանը որակյալ կադրային ռեսուրսի ձևավորման գործում աջակցության համար: Ընտրատեղամասային հանձնաժողովի կարողունակ անդամության համար դասընթացների մասնակիցները ծանոթացան հետևյալ հարցերին. մինչև քվեարկության սկսվելը անցկացվելիք ընթացակարգեր, քվեարկության գործընթաց, ընտրական տեղամասի փակում, մինչև ընտրական տուփի բացումն անցկացվելիք ընթացակարգեր, ընտրատուփի բացում, մինչև քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության կազմումն անցկացվելիք ընթացակարգեր, քվեարկության արդյունքների հանրագումարային արձանագրության կազմում, հանրագումարային արձանագրության հրապարակում:

այս տարի առաջին անգամ պրոֆիլային ծրագիր իրականացվեց ընտրատարածքային հանձնաժողովների պոտենցիալ իրավաբանների համար, ովքեր ուսումնասիրեցին հետևյալ հարցերը. ընտրական վեճեր առաջացնող պատճառներ, քվեարկության օրը ընտրատեղամասում ընթացակարգային ռիսկերի նույնականացում, վարչական վարույթ, ընտրատարածքային հանձնաժողովի նիստի կազմակերպում և ընթացք, ընտրատարածքային հանձնաժողովի/հանձնաժողովինախագահի որոշման պատրաստում ընտրական վեճերի մասին, հակադարձման ձև և վավերատվյալներ:

«Ընտրական ադմինիստրատորի դասընթաց» նախագիծն իրականացվեց 73 ընտրատարածքային հանձնաժողովի կողմից ամբողջ երկրի զանգվածով, Թբիլիսիում և բոլոր մունիցիպալիտետներում, մասնակցեց 5 551 մասնակից, այդ թվում՝ 4 470 (81%) կին էր և 1 081 (19%) տղամարդ: Ընտրական ադմինիստրատորի դասընթացներ նախագիծն իրականացվեց Թբիլիսում կարողունակ իրավաբանների համար, մասնակցեց 128 մասնակից, այդ թվում 77 (60%) –ը կին էր և 51 (40%) –ը տղամարդ:

Ուսումնական դասընթաց՝ «Ընտրական արդարադատություն»

ԿՀՀ-ն և Ուսուցման կենտրոնն իրականացրեցին ուսումնական ծրագիր ընտրական արդարադատության ճյուղում գործընկեր բարձրագույն ուսումնական հաստատությունների

արդարադատության դպրոցի, իրավաբանական, սոցիալական գիտությունների, բիզնեսի և իրավագիտության, գիտությունների և արվեստի ֆակուլտետների ուսանողների համար:

Ծրագիրը նպատակամղված էր աջակցելու ուսանողներին անհրաժեշտ մասնագիտական գիտելիքի խորացմանը, ընտրական արդարադատությունում, նրանց գործնական ունակություն-հմտությունների զարգացմանը և քաղաքացիական գիտակցության բարձրացմանը: Ուսուցման կենտրոնը պատրաստեց օժանդակ ձեռնարկ, գործնական վարժությունների ժողովածու և էլեկտրոնային շնորհանդեսներ:

Ուսումնական դասընթացի շրջանակներում, ուսանողները ծանոթացան հետևյալ հարցերին. ընտրությունների հասկացություն, ընտրությունների տեսակներ և պարբերականություն, ընտրական համակարգեր, Վրաստանի ընտրական արդարադատության աղբյուրներ և սկզբունքներ, ընտրական գործընթաց և ընտրական գործընթացի կառավարման մարմին, Վրաստանի ընտրական վարչության իրավասություններ և աշխատանքի կարգ, ընտրություններին ընդգրկված կողմեր, ընտրողների գրանցում, նախընտրական ընթացակարգ (քարոզչություն), նախընտրական քարոզչության անցկացման տեղեկատվական ապահովում, ընտրությունների ֆինանսավորում, քվեարկության ժամանակ և վայր, ընտրատեղամասի բացում, մինչև քվեարկության սկսվելը անցկացվելիք ընթացակարգեր, քվեարկության գործընթաց, ընտրատեղամասի փակում, քվեարկության արդյունքների հանրագումարում, քվեարկության և ընտրության արդյունքների համրագումարում/որոշում, ընտրական վեճեր, Վրաստանի նախագահի ընտրություններ, Վրաստանի խորհրդարանի ընտրություններ, Աջարիայի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի ընտրություններ, ինքնակառավարման համայնքների և ինքնակառավարման քաղաքների ներկայացուցչական մարմնի՝ Սակրեբուլոյի ընտրություններ, ինքնակառավարվող քաղաքի քաղաքապետի (ինքնակառավարվող համայնքի գամգեբելի) ընտրություններ, հանրաքվե, պլեբիսցիտ: Նախագիծն իրականացվեց ինը համալսարանում, այդ թվում Յակոբ Գոգեբաշվիլիի անվան Թելավի պետական համալսարանում և Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանում: Ուսուցում անցավ 338 ուսանող, այդ թվում 201 (59%) կին և 137 (41%) տղամարդ:

Մեմինարներ համալսարաններում «Իրազեկված երիտասարդ ընտրող»

Համալսարանների հետ ձևակերպված հուշագրերի շրջանակներում երիտասարդների շրջանում քաղաքացիական գիտակցության բարձրացման և ընտրություններին երիտասարդ ընտրողի ակտիվ ընդգրկվածությանը աջակցության համար, ԿԸՀ-ն և ուսուցման կենտրոնը իրականացրեցին «Իրազեկված երիտասարդ ընտրող» նախագիծը երկու փուլով: Ուսումնական դասընթացի շրջանակներում ուսանողները քննարկեցին հետևյալ հարցերը. Ընտրությունների էությունը և դրա նշանակությունը երկրի ժողովրդավարության գործընթացում, Միջազգային պարտավորություններ և սկզբունքներ, Ընտրական գործընթացներում ընտրողի դերի նշանակության հարցերը Վրաստանի նախագահի ընտրությունների համար, ընտրություններին միացած կողմեր և դրանց դերը ընտրական գործընթացում: Նախագիծն իրականացվեց ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ տարբեր տարածաշրջաններում, 12 համալսարանում, այդ թվում Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանում: Մեմինարներին մասնակցություն ունեցան 701 ուսանողներ, այդ թվում՝ 523 (77%) կին և 178 (23%) տղամարդ:

1.4.1.7 Լիազորության շրջանակներում Սամցխե-Ջավախեթի երկրամասային վարչության ընդգրկումը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների քաղաքացիական գիտակցության բարձրացման նպատակով

Երկրամասի վարչության համապատասխան ծառայությունները տարվա ընթացքում ներկա էին և ակտիվորեն ընդգրկված էին քաղաքացիական ակտիվություններում/հանդիպումներին, որոնք կազմակերպված էին ինչպես մունիցիպալիտետների, այնպես էլ տարբեր կազմակերպությունների, այդ թվում ոչկառավարական սեկտորի կողմից:

1.4.1.8 Երկրամասային վարչությունում «Բաց դռների օրվա» անցկացում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար վարչության գործունեության և էթնիկ փոքրամասնությունների հիմնադրույթներին ծանոթության նպատակով
Վարչության գործունեությանը ծանոթության և էթնիկ փոքրամասնությունների հիմնախնդիրներին ուսումնասիրման նպատակով տարվա ընթացքում կազմակերպվեց բաց դռների օր:

1.4.1.9 Մունիցիպալիտետներում բյուջեների հանրային քննարկման և տարբեր միջոցառումների պլանավորման անցկացմանը էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկման ապահովում

2018 թվականին, Սամցխե-Ջավախեթի երկրամասի վարչության համակարգում, մունիցիպալիտետներում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ սկսվեց աշխատանք տնտեսական զարգացման ռազմավարությունների վրա: Նշված նիթրականացվում է Եվրամիության նախաձեռնության շրջանակներում՝ «Քաղաքացիները տնտեսական աճի համար»:

Նույնպես Սամցխե-Ջավախեթի երկրամասի վարչության նախաձեռնությամբ կազմակերպվեցին տեղեկատվական շրջագայություններ տարածաշրջանի մունիցիպալիտետներում: Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանի ուսանողներից և մունիցիպալիտետների աշխատակիցներից ստեղծված խմբերը երկրամասի տեսարժանություններին ծանոթանալուն գուգահեռաբար, հանդիպումներ ունեցան բնակչության լայն շերտերի հետ և բացահայտեցին կոնկրետ կարիքները: Նշված գործունեությունն իրականացվեց այդ թվում էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող վարչական միավորներում՝ Ախալքալաքի և Նինոծմինդայի մունիցիպալիտետներում:

Միջանկյալ նպատակ. 1.5. Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար զանգվածային մեդիայի և տեղեկատվական մատչելիության բարելավում

Խնդիր. 1.5.1 Էթնիկ փոքրամասնությունների լեզուներով հաղորդումների ծրագրերի և էլեկտրոնային/տպագիր մեդիայի մատչելիության ապահովում

Շարունակվեց ոչվրացալեզու տպագիր մեդիայի մատչելիությունը: Տարվա ընթացքում պետության աջակցությամբ հրատարակվեց հայալեզու ամենշաբաթյա «Վրաստան» թերթը (102 համար, 3500 տպաքանակ) և ադրբեջանալեզու ամենշաբաթյա «Գյուրջիստան» թերթը (93 համար, 2000 տպաքանակ): Լրագրերը տարածվեցին ինչպես Թբիլիսիում, այնպես էլ էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում, պատժակատարողական հիմնարկություններում:

1.5.1.2 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ մեղադրյալ/դատապարտյալների ապահովում համապատասխան պետական հաղորդումով

Հատուկ պատժակատարողական ծառայությունը պատժակատարողական հիմնարկություններին տեխնիկապես հնարավոր լինիտի շրջանակներում ապահովում է բոլոր մեղադրյալ/դատապարտյալին հետաքրքիր հեռուստատեսային ալիքների մատչելիությունը: Բացի դրանից նախարարությունն ապահովում է արբանյակային հաղորդմանը անվճար մատչելի հեռուստատեսային ալիքների միացումը: Պատժակատարողական հիմնարկություններում հեռուստատեսային ալիքներով հաղորդումներ իրականացվում են 20 օտար լեզուներով. ռուսական (12 ալիք), անգլերեն (2 ալիք), թուրքական (2 ալիք), ադրբեջանական (2 ալիք), հայկական (1 ալիք) և արաբական (1 ալիք):

Մեղադրյալ/դատապարտյալների ապահովում համապատասխան պարբերականներով

Բոլոր պատժակատարողական հիմնարկության գրադարաններն ապահովված են ադրբեջանալեզու «Գյուրջիստան» և հայալեզու «Վրաստան» լրագրերով:

Միջանկյալ նպատակ 1.6: Էթնիկ փոքրամասնությունների իրավունքների վերաբերյալ հասարակության իրազեկվածության ապահովում

Խնդիր. 1.6.1 «Էթնիկ փոքրամասնությունների պաշտպանության մասին» Եվրոպական շրջանակային կոնվենցիայի կատարում և «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին» Եվրոպական խարտիայի մասին հասարակության իրազեկվածության ապահովում

Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում անցկացված տեղեկատվական քարոզչության արդյունքում բարելավվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների տարբեր հարցերի վերաբերյալ իրազեկության մակարդակը, ի մասնավորի, մարդու իրավունքների, էթնիկ փոքրամասնությունների պաշտպանության, այդ թվում միջազգային մեխանիզմների մասին:

1.6.1.1.Մեդիայի հետ համագործակցության ամրապնդում, համապատասխան հիմնարկությունների և ոչկառավարական կազմակերպությունների հետ համակարգում, համատեղ միջոցառումների պլանավորում

Տես՝ 1.4.1.9

1.6.1.2Տեղեկատվական քարոզչություն ազգային փոքրամասնությունների պաշտպանության Եվրոպական շրջանակային կոնվենցիային ծանոթության նպատակով ինչպես Թբիլիսիում, այնպես էլ Վրաստանի տարածաշրջաններում

Պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ և ընդգրկմամբ Սամցխե-Ջավախեթում (Նինոծմինդա, Ախալքալաքի), Քվեմո Քարթլիում (Մառնեուլի, Բոլնիսի, Դմանիսի, Ծավկա, Գարդաբանի), Կախեթիում (Պանկիսի կիրճ, Լագոդեխի, Սագարեջո, Թելավի) Թբիլիսիում հանդիպումներ անցկացվեցին էթնիկ փոքրամասնությունների իրավունքների և ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի և դրա կատարման մասին:

Խնդիր. 1.6.2 Հանրային ծառայողների և էթնիկ փոքրամասնությունների թիրախային խմբերի գիտակցության բարձրացում էթնիկ փոքրամասնությունների իրավունքների և հակախտրականության օրենսդրության ոլորտում

1.6.2.1.Արտագնա հանդիպումների կազմակերպում Ախալքալաքի և Նինոծմինայի մունիցիպալիտետներում

Դիտեք՝ 1.4.1.9

Ռազմավարական նպատակ 2

Հավասար սոցիալական և տնտեսական պայմանների ու կարողությունների ստեղծում

Միջանկյալ նպատակ 2.1. Սոցիալական և տարածաշրջանային շարժունության աջակցություն

Խնդիր. 2.1.1 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների տնտեսական իրավիճակի բարելավման աջակցություն

Ենթակառույցի վերականգնում¹

Տարբեր նախագծերի, այդ թվում ենթակառույցային նախագծերի իրականացման ճանապարհով օժանդակություն ցուցաբերվեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների սոցիալական իրավիճակի բարելավմանը: Իրականացվեցին ճանապարհների վերականգնում, դրսի լուսավորության և ներքի ճանապարհների սարքավորում, ռոռզման և կոյուղային համակարգերի վերականգնում և այլն:

Սամցխե-Ջավախեթի տարածաշրջան

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 47 նախագիծ 21 385 845 լարի ընդհանուր արժողությամբ, այդ թվում ՏՁՀ գումարը՝ 19 489 657 լարի,
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվեց 4 նախագիծ, 2 516 262 լարի ընդհանուր արժողությամբ, այդ թվում ՏՁՀ գումարը՝ 2 390 448 լարի,

Քվեմո Քարթլիի տարածաշրջան

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 63 նախագիծ, 33 732 709 լարի ընդհանուր արժողությամբ, այդ թվում ՏՁՀ գումարը՝ 26 488 474 լարի,
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվեց 3 նախագիծ, 284 895 լարի ընդհանուր արժողությամբ, այդ թվում լեռան հիմնադրամի գումարը՝ 270 650 լարի:

¹Դիտեք Հավելված 1

Կախեթի տարածաշրջան

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 164 նախագիծ, 37 362 821լարի ընդհանուր արժողությամբ, այդ թվում ՏԶՀ գումարը՝ 35 223 336 լարի,
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվեց 8 նախագիծ, 1 019 408 լարի ընդհանուր արժողությամբ, այդ թվում լեռանհիմնադրամի գումարը՝ 968 436 լարի:

Սոցիալապես անպաշտպան բնակչությանը, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին, ցուցաբերվեց սոցիալական օգնություն, մասնավորապես, բժշկական սպասարկման և դեղորայքի ֆինանսավորում, տնտեսապես և սոցիալապես կարիքավոր ընտանիքներին մեկանգամյա դրամական օգնություն, նորածիններին և բազմազավակ ընտանիքներին օգնություն և այլն:

2.1.1.1.Տեղական բյուջեով պլանավորված ենթակառուցային աշխատանքներ. հանքախորշի սարքավորում, ջրմուղ մայրուղու սարքավորում, ավտոմոբիլային ճանապարհների կառուցում, դրսի լուսավորության սարքավորում, մարզահրապարակի և պուրակի լուսավորում և այլն:

2018 թվականին Կախեթի տարածաշրջանի էթնիկ փոքրամասնություններով բնակվող գյուղերում իրականացվեցին մի քանի ենթակառուցային նախագծեր, ի մասնավորի.

Ախմետայի մունիցիպալիտետ

- ❖ Բիրկիանի գյուղում Ղուրեի կիրճում սարքավորվեց երկաթբետոնի կամրջակ՝ 15181 լարի ընդհանուր արժողությամբ,
 - ❖ Դուխի գյուղում իրականացվեց ըմբշամարտի դահլիճի վերականգնում՝ 4535 լարի ընդհանուր արժողությամբ
- ❖ Վերականգնվեց Ջողոլո և Դուխի #1, Դուխի #2 գյուղերի, Բիրկիանիի, Օմալոյի և Դումաստուրիի մանկապարտեզները՝ 30497 լարի ընդհանուր արժողությամբ,

Թելավի մունիցիպալիտետ

- ❖ Ղարաջալար գյուղում սարքավորվեց հորատանցք, 110 000 լարի ընդհանուր արժողությամբ,
- ❖ Նույն գյուղում սարքավորվեց դրսի լուսավորության 40 միավոր լուսատու սարք, 8000 լարի ընդհանուր արժողությամբ,

Դեղոփլիսծղարոյի մունիցիպալիտետ

- ❖ Սաբաթը և ճոռտի գյուղերում սկսվել և շարունակվում են բնական վառելիքով գազիֆիկացման աշխատանքները, սարքավորվեց կենտրոնական մայրուղային գազամուղ, Սաբաթը գյուղում սարքավորվեց նաև ներքին ցանցը:

Լագոդեխի մունիցիպալիտետ

- ❖ Գանջալա գյուղում տարածաշրջանային զարգացման հիմնադրամի հետ միասին իրականացվեց ներքին գյուղական ճանապարհի վերականգնում 241578 լարի ընդհանուր արժողությամբ,
- ❖ Զեմո Բոլքվի գյուղում հորատանցքի և ճնշման-տեղամասային ցանցի սարքավորումը լրիվությամբ ֆինանսավորվեց տեղական բյուջեից՝ 62275 լարիով,
- ❖ Քվեմո Բոլքվի գյուղում խմելու ջրի համակարգի վերականգնումը լրիվությամբ ֆինանսավորվեց տեղական բյուջեից՝ 29670 լարիով,

Սագարեջոյի մունիցիպալիտետ

- ❖ Իրականացվեցին Դուզագրամա-Լամբալո-Թուլարի գյուղերի ջրամատակարարման համակարգի վերականգնման և Յորմուղանլո գյուղում երկաթբետոնե հենասյուների սարքավորման աշխատանքներ՝ 7 261 լարի ընդհանուր արժողությամբ,
- ❖ Լամբալո գյուղում սարքավորվեցին արագությունը սահմանափակող պատնեշներ,
- ❖ Լամբալո և Դուզագրամա գյուղերում գոյություն ունեցող խմելու ջրի հորատանցքերում իրականացվեց մոնտաժման, խմելու ջրի հորատանցքի վնասված քաշող պոմպերի և դրանց հավաքածուների (նորով փոխարինելու) հայթայթման-մոնտաժման աշխատանքներ:

2.1.1.2 Բիզնեսի զարգացմանը օժանդակող միջավայրի ձևավորում, պետական ծրագրերի իրականացման, տրանս-սահմանային տնտեսական կապերի հզորացման աջակցություն

Էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունը, «Արտադրիչ Վրաստանում» ծրագրի շրջանակներում, Քվեմո Քարթլիում, Սամցխե-Ջավախեթիի և Կախեթի տարածաշրջանների էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող մունիցիպալիտետներում անցկացրեց 21 տեղեկատվական հանդիպում: Հանդիպմանը ներկա էին էթնիկ փոքրամասնությունների 873 ներկայացուցիչներ:

2.1.1.3 Բնակչության տնտեսական իրավիճակի բարելավման նպատակով ենթակառուցային նախագծերի իրականացում

Հաշվետու ժամանակաշրջանում էթնիկ փոքրամասնություններով բնակեցված վարչական միավորներ Ախալցխի, Նինոծմինդայի և Ախալքալաքի մունիցիպալիտետներում իրականացվեցին հետևյալ նախագծերը. ավտոմոբիլային ճանապարհների և ներքին ճանապարհների վերականգնում, մարզահրապարակների և պուրակների սարքավորում, կոյուղիների և հենարանային պատի վերականգնում և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում էթնիկ փոքրամասնություններով բնակվող վարչական միավորներում պետական և տեղական բյուջեների ֆինանսավորմամբ իրականացվեց 126 նախագիծ, 16 773 784 լարի ընդհանուր արժողությամբ, այդ թվում.

- ❖ Ախալցխի մունիցիպալիտետում՝ 51 նախագիծ - 6 326 182 լարի,
- ❖ Ախալքալաքի մունիցիպալիտետում՝ 43 նախագիծ - 7 105 337 լարի,
- ❖ Նինոծմինդայի մունիցիպալիտետում՝ 32 նախագիծ - 3 342 265 լարի,

2.1.1.4 Սոցիալական ծրագրերին ծանոթացնելու նպատակով, տեղեկատվական հանդիպումների կազմակերպում էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջանների մունիցիպալիտետներում տարբեր թիրախային խմբերի հետ. ոչկառավարական կազմակերպությունների, մունիցիպալիտետի ներկայացուցիչների հետ և այլն,

Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար տեղեկատվական քարոզչության շրջանակներում, սոցիալական ծրագրերին ծանոթության և առողջության պահպանության պետական ծրագրերին ծանոթության նպատակով Վրաստանի բռնագրավված տարածքներից տարհանվածների, աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարության կողմից անցկացվեցին հանդիպումներ, որոնց ներկա էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ տեղական բնակչություն, նահանգապետի վարչության և մունիցիպալիտետների ներկայացուցիչներ, գյուղերի լիազորներ, ուսուցիչներ, բուժանձնակազմ, տեղական կազմակերպություններ, տեղական մեդիա, երիտասարդներ, այլ շահագրգիռ կողմեր: Ի մասնավորի, հունիս-հուլիս ընկած ժամանակաշրջանում Քվեմո Քարթլիի տարածաշրջանում՝ Մառնեուլի, Գարդաբանի, Ծալկա, Դմանիսի և Բոլնիսի անցկացվեց 5 տեղեկատվական հանդիպում, Կախեթի տարածաշրջանում՝ Յորմուղանլո (Մազարեջոյի մունիցիպալիտետ), Կաբալ (Լազոդեխի մունիցիպալիտետ), Չանտլիսի Պրե (Ղվարելի մունիցիպալիտետ), Դուրիսի (Պանկիսի կիրճ, Ախմետի մունիցիպալիտետ), Ղարաջալա՝ (Թելավի մունիցիպալիտետ) նույնպես անցկացվեց 5 տեղեկատվական հանդիպում և նաև հանդիպումներ Ախալքալաքի-Նինոծմինդա-Մանցիսե-Ջավախեթի տարածաշրջանում (ընդամենը 12 հանդիպում):

Դրա հետ միասին, վերը նշված հանդիպումների ժամանակ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին սոցիալական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովման համար տպագրվեցին և տարածվեցին տեղեկատվական բրոշյուրներ վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով:

2.1.1.5 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող տարածաշրջաններում առողջության պահպանության պետական ծրագրերին ծանոթության նպատակով տեղեկատվական

հանդիպումների կազմակերպում, ինչպես նաև խրոնիկական դեղորայքով ապահովման ծրագրի վերաբերյալ տեղեկատվության մատուցում և C հեպատիտի անվճար սկրինինգի կազմակերպում

C հեպատիտի անվճար սկրինինգ կազմակերպվել է ամբողջ երկրի մասշտաբով ինչպես բժշկական հիմնարկություններում, այնպես էլ շրջող բրիգադների միջոցով, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող տարածաշրջաններում, որտեղ C հեպատիտի անվճար սկրինինգ իրականացվել է Մառնեուլի, Ռուսթավի և Ախալցխեի Արդարադատության տներում:

Նշվածի կապակցությամբ տեղեկատվական հանդիպումներ անցկացվեցին Քվեմո Քարթլիի տարածաշրջանում (Մառնեուլի, Գարդաբանի, Ծալկա, Դմանիսի, Բոլնիսի), Կախեթի տարածաշրջանում (Յորմուղանլո Սագարեջոյի մունիցիպալիտետ), Կաբալում (Լագոդեխի մունիցիպալիտետ), Չանտլիսդուրեում (Ղվարելի մունիցիպալիտետ), Դուխում (Պանկիսի կիրճ, Ախմետայի մունիցիպալիտետ), Ղարաջալայում (Թելավի մունիցիպալիտետ) և Սամցխե-Ջավախեթում (Ախալքալաքի և Նինոծմինդայի մունիցիպալիտետներ):

Խրոնիկական դեղորայքով ապահովման ծրագրի և C հեպատիտի էլիմինացիայի ծրագրի վերաբերյալ նույնպես բնակչության իրազեկման նպատակով պատրաստվեց և տարածվեց 4000-4000 միավոր տեղեկատվական բրոշյուր (վրացերեն, ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով):

2.1.1.6 Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում պլանավորված շարժուն էքստենցիայի շրջանակներում տեղեկատվական խորհրդատվական հանդիպումներ ֆերմերների հետ

Շարժական ընդլայնման շրջանակներում ֆերմերների հետ տեղեկատվական-խորհրդատվական հանդիպումներ անցկացվեցին 8 գյուղերում.

- ❖ Նինոծմինդայի մունիցիպալիտետ, գյուղ Գորելովկա,
- ❖ Ախալքալաքի մունիցիպալիտետ, գյուղ Կոթելիա և Վաչիանի,
- ❖ Ծալկայի մունիցիպալիտետ, գյուղ ավան Թրիալեթի,
- ❖ Մառնեուլի մունիցիպալիտետ, գյուղ Կասումլո և Մադախլո,
- ❖ Դմանիսի մունիցիպալիտետ, գյուղ Տնուսի,
- ❖ Բոլնիսի մունիցիպալիտետ, գյուղ Սամվերիսի:

1.1.7 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում տեղեկատվական նյութի (բրոշյուրներ, բուկլետներ, տեղեկատվական տեսանյութ և այլն) տարածում Քվեմո Քարթլիում, Սամցխե-Ջավախեթիում և Կախեթում տարածվեց 100 միավոր բրոշյուր, այդ թվում գյուղատնտեսական համայնատիրության ուղեցույց՝ հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով հոծ բնակվող տարածաշրջաններում տարածվեցին 11100 միավոր տարբեր տեղեկատվական նյութեր գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի կապակցությամբ:

2.1.1.8 Համայնատիրություններին աջակցող պետական ծրագրերի մասին տեղեկատվական հանդիպումների անցկացում էթնիկ փոքրամասնություններով բնակվող տարածաշրջաններում (Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի, Կախեթի)

Քվեմո Քարթլիում, Սամցխե-Ջավախեթիում և Կախեթում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար անցկացվեց 4 տեղեկատվական հանդիպում գյուղատնտեսական համայնատիրությունների և աջակցության ծրագրերի մասին:

2.1.1.9 Էթնիկ փոքրամասնությունների հարցերով աշխատող կազմակերպությունների հետ միասին տեղեկատվական բնույթի հանդիպումների կազմակերպում քաղաքի բյուջեով նախատեսված տնտեսական ծրագրերին և սերվիսներին ծանոթության նպատակով

Տես՝ 1.3.2.7

2.1.1.10 Միկրո և փոքր ձեռներեցության աջակցություն Վրաստանի տարածաշրջաններում

2018 թվականին ֆինանսավորվեց 320 բիզնես նախագիծ, այդ թվում.

- ❖ Քվեմո Քարթլիի տարածաշրջանում՝ 61,
- ❖ Կախեթի տարածաշրջանում՝ 135,
- ❖ Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում՝ 124 բիզնես նախագիծ:

2.1.2.1. Ենթակառույցային նախագծեր Քվեմո Քարթլիի տարածաշրջանում,

Հաշվետու ժամանակաշրջանում էթնիկ փոքրամասնություններով բնակվող վարչական միավորներում, պետական և տեղական բյուջեների ֆինանսավորմամբ, իրականացվեցին մի քանի նախագծեր, մասնավորապես.

- ❖ **Ծալկայի մունիցիպալիտետ** - 55 նախագիծ 4908500 լարի ընդհանուր արժողությամբ,
- ❖ **Թերթիձղարոյի մունիցիպալիտետ** - 32 նախագիծ, 2671100 լարի ընդհանուր արժողությամբ,
- ❖ **Մառնեուլիի մունիցիպալիտետ** - 36 նախագիծ, 3759980 լարի ընդհանուր արժողությամբ,
- ❖ **Բոլնիսի մունիցիպալիտետ** - 70 նախագիծ, 8011368 լարի ընդհանուր արժողությամբ,
- ❖ **Դմանիսի մունիցիպալիտետ** - 9 նախագիծ, 602283 լարի ընդհանուր արժողությամբ,
- ❖ **Գարդաբանի մունիցիպալիտետ** - 22 նախագիծ, 10180000 լարի ընդհանուր արժողությամբ,
- ❖ **Ռուսթավի մունիցիպալիտետ** - 29 ենթակառույցային նախագիծ, 2951177 լարի ընդհանուր արժողությամբ,

2.1.2.3 Սամցխե-Ջավախեթի մունիցիպալիտետների և այլ գերատեսչությունների սոցիալական ծրագրերով էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից շահառության և հավասար բաշխման աջակցություն:

2018 թվականի 7 ամիսների ընթացքում

- ❖ Նինոծմինդայի մունիցիպալիտետում սոցիալական օգնության ծրագրից օգտվեց 607 բենեֆիցիար, այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ 541 քաղաքացի, տրված սոցիալական օգնությունը՝ 129632 լարի,

- ❖ Ախալցխի մունիցիպալիտետում՝ 1547 բենեֆիցիար, այդ թվում էթնիկ փոքրամասնության 477 ներկայացուցիչ, տրված սոցիալական օգնությունը՝ 152 664 լարի,
- ❖ Ախալքալաքի մունիցիպալիտետում՝ 783 բենեֆիցիար, այդ թվում էթնիկ փոքրամասնության 685 ներկայացուցիչ, տրված սոցիալական օգնությունը՝ 265 230 լարի:

Քվեռն Քարթլիի տարածաշրջանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները օգտվում են միանգամյա նյութական օգնության, ստացիոնար-ամբուլատորային սպասարկման ծրագրերից, անվճար տրանսպորտի սպասարկմամբ, որը հաշվարկված է ուսանողների, վետերանների և կույրերի համար: Ընտանիքների սոցիալական պաշտպանության ծրագրերի համաձայն, Բոլնիսում 170 բենեֆիցիարի տրվեց 422,594 լարիի չափով օգնություն, Դմանխիում՝ 1050 բենեֆիցիարի՝ 312,961 լարիի օգնություն, Ծալկայում՝ 800 բենեֆիցիարի 400,000 լարիի օգնություն:

Կախերի տարածաշրջանում տարվա ընթացքում 900-ից ավելի բենեֆիցիարի, այդ թվում էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչ, տարբեր տեսանկյունից ցուցաբերվեց սոցիալական օգնություն, այդ թվում. բժշկական սպասարկման և դեղորայքի ֆինանսավորում, տնտեսապես և սոցիալապես կարիքավոր ընտանիքներին միանգամյա դրամական օգնություն, նորածին ընտանիքի օգնություն, բազմազավակ ընտանիքների օգնություն: Երիկամի փոխարկման թերապիա՝ հերմոդիալեզի ուղևորության ծախս, բնական աղետի և հրդեհի արդյունքում տուժվածների օգնություն, ընդհանուր առմամբ սոցիալական օգնության տեսքով տարվա ընթացքում տրվեց 200 000 լարի:

Ռազմավարական նպատակ 3


Որակյալ կրթության մատչելիության ապահովում և պետական լեզվի իմացության բարելավում

Հաշվետու ժամանակաշրջանում առանձնահատուկ ուշադրություն հատկացվեց որակյալ կրթության մատչելիության ապահովմանը և պետական լեզվի իմացության մակարդակի բարելավմանը, ինչը քաղաքացիական ինտեգրման գործընթացի կարևոր գործիքն է:

Նշված ռազմավարական նպատակի շրջանակներում իրականացվեցին շատ միջոցառումներ և ծրագրեր, որոնք ծառայում էին հետևյալ առաջնահերթային նպատակների իրականացմանը.

- ❖ Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար նախադպրոցական կրթության հնարավորությունների աճ և համընդհանուր կրթության որակի բարելավում,
- ❖ Բարձրագույն կրթության մատչելիության ապահովում,
- ❖ Մասնագիտական և չափահասների կրթության մատչելիության բարելավում,
- ❖ Պետական լեզվի իմացության մակարդակի բարելավում,

Կրթության յուրաքանչյուր աստիճանը մատչելի է էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար: Ապահովված է նաև մայրենի լեզուներով կրթություն ստանալու հնարավորությունը (աղբբեջաներեն, հայերեն, ռուսերեն): Վրաստանում գործում է 211 ոչվրացալեզու հանրային դպրոց և 76 ոչվրացալեզու սեկտոր, այդ թվում՝ 82 աղբբեջանալեզու, 118 հայալեզու, 11 ռուսալեզու դպրոցներ: Նմանապես վրացերեն-աղբբեջաներեն սեկտոր՝ 32, վրացերեն-ռուսերեն սեկտոր՝ 29, վրացերեն-հայերեն սեկտոր՝ 10, վրացերեն-աղբբեջաներեն-ռուսերեն սեկտոր՝ 1, վրացերեն-ռուսերեն-հայերեն սեկտոր՝ 1:



Միջանկյալ նպատակ. 3.1 Նախադպրոցական կրթության մատչելիության աճ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար

Խնդիր. 3.1.1 Նախադպրոցական կրթության ծրագրի մշակում, ուսումնական ռեսուրսների մոդուլների ստեղծում, դաստիարակ-ուսուցիչների և վարչության անձնակազմի մասնագիտական կրթության ծրագրերի պատրաստում

Քվեմո Քարթլիի բոլոր մունիցիպալիտետներում ստեղծվել են նախադպրոցական պատրաստության ծրագրեր

3.1.1.1 Բաղիաուրի գյուղի մանկապարտեզում հավելյալ խմբի բացում աղբբեջանալեզու երեխաների համար: Օմալոյի, Դուխսի N1, Բիրկիանի մանկապարտեզների վերականգնում

Լրացուցիչ միջոցառումներ. Պանկիսի կիրճի մանկապարտեզներում (11 մանկապարտեզ և 17 խումբ) ակտիվորեն արմատավորված է և ընթացիկ տարի շարունակվում է «Դպրոցական նախապատրաստության ծրագրով» աշխատանքը: Կենտրոնի մեթոդիստների կողմից տեղի է ունենում դաստիարակների վերապատրաստում:

3.1.1.2 Ծալկայի մունիցիպալիտետի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող գյուղերում (Կիզիլ-քիլիսա, Կոխտա) նախադպրոցական դաստիարակության հաստատության շինարարության երկրորդ փուլի իրականացում/շինարարության ավարտ

Ծալկայի մունիցիպալիտետի էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող գյուղերում. Ավրանլո, Կոխտա, Արծիվանի, Կիզիլ-Քիլիսա գյուղերում անցկացվեց նախադպրոցական հաստատությունների վերականգնում/ժամանակակից չափորոշիչներին համապատասխան: Սամբա և Սադրիթոն գյուղերում բացվեցին նոր մանկապարտեզներ:

3.1.1.3 Գարդաբանիում Աղթակլիա-Ղարաթակլիայում պարտեզի շինարարության երկրորդ փուլ

Աղթակլիա-Ղարաթակլիա պարտեզի շինարարության առաջին փուլն ավարտվեց 2018 թվականին: Այս փուլում ընթանում են երկրորդ փուլի աշխատանքներ, մասնավորապես նախագծի իրականացման համար ընթանում է համապատասխան փորձաքննություն և ծախսերի հաշվարկ: Պլանավորված է տեղերի հայտարարում: Պարտեզը սպասարկելու է երկու գյուղերին:

3.1.1.4 Մառնեուլիում Սաիմերլո գյուղում մանկապարտեզի շինարարություն

Աղթակլիա-Ղարաթակլիայի պարտեզը կավարտվի 2019 թվականի երրորդ եռամսյակում: Մառնեուլի Սաիմերլո գյուղում՝ մինչև 2019 թվականի վերջը.

3.1.1.5 Սամցխե-Չավախեթի տարածաշրջանի նախադպրոցական դաստիարակության հիմնարկություններում ոչվրացալեզու խմբերի ձևավորման և պետական լեզվի ուսուցման աջակցություն, ոչվրացալեզու մանկապարտեզների նյութա-տեխնիկական բազայի հագեցում, ուսուցման և դաստիարակության պատշաճ պայմանների ստեղծում,

Տեղական բյուջեով ֆինանսավորված նախագծեր

Նինոծմինդայի մունիցիպալիտետ

- ❖ Մեծ Արագյալ գյուղի մանկապարտեզի վերականգնողական և գազիֆիկացման աշխատանքներ: Արժողությունը՝ 17 698 լարի, 200 բենեֆիցիար,
- ❖ Ք. Նինոծմինդայի մանկապարտեզի վերականգնում և տարածքի բարեկարգում: Արժողությունը՝ 66 666 լարի, 500 բենեֆիցիար,
- ❖ Գորելովկա գյուղի մանկապարտեզի վերականգնում: Արժողությունը՝ 5 635 լարի, 1 200 բենեֆիցիար,

Ախալքալաքի մունիցիպալիտետ

- ❖ Կուլիկամ գյուղում մանկապարտեզի շինարարություն: Արժողությունը՝ 170 186 լարի, 120 բենեֆիցիար,
- ❖ Ախալքալաքի շրջանի Կարծախ գյուղի մանկապարտեզում ջեռուցման համակարգի կաթսայի մոնտաժ, արժողությունը 13 098, 80 բենեֆիցիար,
- ❖ Կարտիկամ գյուղի մանկապարտեզի վերականգնում: Արժողությունը՝ 9 642 լարի, 80 բենեֆիցիար,
- ❖ Ախալքալաքի մունիցիպալիտետի Խուլգումո գյուղի մանկապարտեզի շենքի վերանորոգում, արժողությունը՝ 2 677 լարի, 80 բենեֆիցիար,

Ախալցխի մունիցիպալիտետ

- ❖ Ք. Վալեում մշակույթի տուն և մանկապարտեզ տանող ճանապարհի բարեկարգում: Արժողությունը՝ 41 007 լարի, 5750 բենեֆիցիար,
- ❖ Ք. Ախալցխի մունիցիպալիտետում N1 մտուր-մանկապարտեզի բակի բարեկարգում: Արժողությունը՝ 47531 լարի, 460 բենեֆիցիար:

3.1.1.6 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին որակյալ և մատչելի նախադպրոցական կրթություն ապահովելու նպատակով, վաղ և մինչդպրոցական դաստիարակության և կրթության պետական չափորոշիչների և դաստիարակ-մանկավարժի մասնագիտական չափորոշիչի թարգմանություն էթնիկ փոքրամասնությունների լեզուներով

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար որակյալ և մատչելի մինչդպրոցական կրթության ապահովման նպատակով, ադրբեջաներեն և հայերեն լեզուներով 2018 թվականին թարգմանվեցին վաղ և մինչդպրոցական դաստիարակության և կրթության պետական չափորոշիչները և դաստիարակ-մանկավարժի մասնագիտական չափորոշիչը:

3.1.1.7 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներով բնակվող տարածաշրջանների մինչդպրոցական կրթության հիմնարկությունների կադրերի վերապատրաստության օժանդակություն՝ պետական լեզվի ուսուցման ապահովման ուղղությամբ

Զուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը 2018 թվականին պետական լեզվի ծրագրով պատրաստեց Ախալքալաքի, Ախալցխի մունիցիպալիտետի, Նինոծմինդայի, Բոլնիսի, Մառնեուլի, Գարդաբանի, Մագարեջոյի և Ախմետայի մինչդպրոցական կրթական հիմնարկությունների 46 աշխատակից, այդ թվում 26 դաստիարակ:

Միջանկյալ նպատակ. 3.2 Որակյալ ընդհանուր կրթության մատչելիության աճ ինչպես պետական, այնպես էլ մայրենի լեզուներով

Խնդիր. 3.2.1 Ազգային ուսումնական պլանի և կրթական ռեսուրսների բարելավում-զարգացում որակյալ երկլեզվյա կրթության արմատավորմանն աջակցության համար

Աղբրեջաներեն և հայերեն լեզուներով 2018 թվականին թարգմանվեցին տարրական աստիճանի (I-IV, V-VI դասարանների) չափորոշիչները,

3.2.1.1 Ազգային ուսումնական օլիմպիադայի անցկացում հայերեն, աղբրեջաներեն և ռուսերեն լեզուներով

2018 թվականին անցկացված ազգային ուսումնական օլիմպիադային մասնակցություն ունենցան.

- ❖ 1394 աղբրեջանալեզու աշակերտ,
- ❖ 1393 հայալեզու աշակերտ,
- ❖ 694 ռուսալեզու աշակերտ:

3.2.1.2 Դպրոցի ավարտական քննությունների անցկացում ռուսերեն, հայերեն և աղբրեջաներեն լեզուներով

Դպրոցի ավարտական քննություններին XI դասարանի քննական լեզու ընտրեց.

- ❖ Աղբրեջաներեն լեզու – 1257 աշակերտ, նրանցից 851 ստացավ դրական գնահատական դպրոցի ավարտական քննություններ հանձնելով բոլոր առարկաներից,
- ❖ Հայոց լեզու - 944 աշակերտ, նրանցից 686 ձեռք բերեց դրական գնահատակ դպրոցի ավարտական քննություններ հանձնելով բոլոր առարկաներից,
- ❖ Ռուսերեն լեզու - 849 աշակերտ, նրանցից 748 ձեռք բերեց դրական գնահատական դպրոցի ավարտական քննությունների ժամանակ քննություններ հանձնելով բոլոր առարկաներից,

XII դասարանի դպրոցի ավարտական քննություններից.

- ❖ Աղբրեջաներեն լեզու - 2043 աշակերտ, նրանցից 1026 դրական գնահատական ձեռք բերեց դպրոցի ավարտական քննություններ հանձնելով բոլոր առարկաներից,
- ❖ Հայոց լեզու - 1491 աշակերտ, նրանցից 905 դրական գնահատական ձեռք բերեց դպրոցի ավարտական քննություններ հանձնելով բոլոր առարկաներից,
- ❖ Ռուսերեն լեզու – 1037 աշակերտ, նրանցից 817 ձեռք բերեց դրական գնահատական դպրոցի ավարտական քննություններ հանձնելով բոլոր առարկաներից:

Ինտեգրման գործընթացին աջակցության նպատակով, 2018 թվականին Վրաստանի տարածաշրջանների փոքրաթիվ հանրային դպրոցների աշակերտների համար իրականացված ձմեռային և ամառային ճամբարներին մասնակցեց էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ 600-ից ավելի աշակերտ:

Խնդիր. 3.2.2 Աջակցություն ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների որակավորման բարձրացմանը

Տարվա ընթացքում ուշադրություն հատկացվեց ուսուցիչների վերապատրաստմանը/որակավորման բարձրացմանը: Շարունակվեց «Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացում» ծրագիրը, որը նախատեսում է Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցների կադրային դեֆիցիտի հաղթահարում: Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցներում վրացերենի, որպես երկրորդ լեզվի ուսուցիչների դեֆիցիտը լրացնելու նպատակով գործուղվեց ուսուցիչների երեք խումբ.

- ❖ 121 խորհրդական-ուսուցիչ,
- ❖ 86 օգնական ուսուցիչ,
- ❖ 77 երկլեզվյա օգնական ուսուցիչ,

3.2.2.1 Առարկայի քննության, առարկայական և մասնագիտական լիազորությունների հավաստագրման անցկացում ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով միայն այն ապլիկանտների համար, ովքեր դասավանդում են ոչվրացալեզու դպրոցներում:

Առարկայի քննության և առարկայական լիազորության հավաստագրման թեստավորմանը.

- ❖ Հայոց լեզու ընտրեց 561 անձ,
- ❖ Ադրբեջաներեն՝ 494,
- ❖ Ռուսերեն՝ 147,

3.2.2.2 Լիդերության ակադեմիա 1 և 2-ի շրջանակներում.

- ❖ Սահմանված վարժանք-մոդուլների թարգմանություն էթնիկ փոքրամասնությունների լեզուներով,
- ❖ Վարժանքների անցկացում հանրային դպրոցների ոչվրացալեզու տնօրենների և ֆասիլիտատորների համար,

Լիդերության ակադեմիա 2-ի 1-2 մոդուլների շրջանակներում վարժանքները սկսվեցին 2017 թվականի դեկտեմբերին և ավարտվեցին 2018 թվականի մայիսին: Վարժանքին ներկա էին 143 (85%) տնօրեն և 124 (81%) ֆասիլիտատոր, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Լիդերության ակադեմիա 2-ի 3-4-5 վարժանք-մոդուլներ անցկացվեցին 2018 թվականի օգոստոսին, վարժանքի հրավիրված էին բոլոր ոչվրացալեզու դպրոցների տնօրենները և ֆասիլիտատորները: Մասնակցեցին 151 տնօրեն (84%) և 129 ֆասիլիտատոր (74%):

Լիդերության ակադեմիա 2-ի 6 վարժանք մոդուլ անցկացվեց 2018 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Վարժանքին հրավիրված էին ոչվրացալեզու դպրոցների տնօրեններ/ֆասիլիտատորներ: Ներկա էին. 167 տնօրեն (84%) և 138 (75%) ֆասիլիտատոր:

3.2.2.3 Ուսուցիչների առարկայական ուղղության վարժանք-մոդուլների թարգմանություն էթնիկ փոքրամասնությունների լեզուներով

2018 թվականի հունիսին ավարտվեց առարկայական մեթոդիկայի բոլոր (6) մոդուլի թարգմանությունը և խմբագրումը ադրբեջաներեն, ռուսերեն և հայերեն լեզուներով:

3.2.2.4 Հնդհանուր մասնագիտական ունակությունների դասընթացի երկրորդ («Աշակերտին կողմնորոշված ուսումնական միջավայր՝ դասավանդման և գնահատման ռազմավարություններ») և

Երրորդ («Ուսումնական գործընթացի դրական կառավարում և պատրաստություն մասնագիտական զարգացման համար») մոդուլների համաձայն անցկացվեց ուսուցիչների վարժանք, առարկայական ուղղության մոդուլների համաձայն ուսուցիչների վարժանքների անցկացում

Ընդհանուր մասնագիտական դասընթացի երրորդ («Ուսումնական գործընթացի դրական կառավարում և պատրաստություն մասնագիտական զարգացման համար») մոդուլի համաձայն վարժանքներ անցկացվեցին 2018 թվականի ապրիլ-մայիս ժամանակաշրջանում և վերապատրաստվեցին 1421 (68%) ոչվրացալեզու ուսուցիչներ,

3.2.2.5«Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի» շրջանակներում Էթնիկ փոքրամասնությունների լեզուներով դասավանդվող դպրոցներ/սեկտորներ վրացերենի, որպես երկրորդ լեզվի խորհրդական/ուսուցիչների, վրացերենի, աշխարհագրության և պատմության օգնական ուսուցիչների և Ազգային ուսումնական պլանով նախատեսված ցանկացած առարկայի երկլեզվյա օգնական ուսուցիչների (այսպես կոչված 1+4 ծրագրի շրջանավարտ բակալավրի) գործուղում

Դպրոցներ գործուղվեց ուսուցիչների երեք խումբ.

- ❖ 121 խորհրդական-ուսուցիչ,
- ❖ 86 օգնական ուսուցիչ,
- ❖ 77 երկլեզվյա օգնական ուսուցիչ,

Հաշվետու ժամանակաշրջանում «Դպրոցներում բուլինգի կանխում և հանդուրժողական մշակույթի զարգացման աջակցություն» մոդուլով վարժանք անցավ 548 մանկավարժ (քաղաքացիական կրթության ուսուցիչները և դասվարները), ինչպես նաև «Սովորեցրու Վրաստանի համար» ծրագրի 170 մասնակից (ընդամենը 718 ուսուցիչ):


3.2.2.6«Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի» շրջանակներում ծրագրի խորհրդական-ուսուցիչների կողմից ծրագրի օգնական ուսուցիչների և տեղական ուսուցիչների մասնագիտական զարգացմանը կողմորոշված խորհրդատվությունների անցկացում (առարկայի դասավանդման մեթոդիկայի ուղղությամբ, դասի պլանավորում, դասերի դիտարկում, ինքնագնահատում)

Ծրագրի շրջանակներում գործուղված խորհրդական-ուսուցիչների խորհրդատվության հիման վրա ենթածրագրի օգնական ուսուցիչները և Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչները բարելավում են մասնագիտական ունակությունները. Ոչվրացալեզու դպրոցի բազայի վրա ոչձևական ուսուցման պրակտիկայի բարելավման նպատակով ծրագրի շրջանակներում խորհրդական ուսուցիչների և օգնական ուսուցիչների կողմից իրականացվեց շուրջ 1000 նախագիծ:

Միջանկյալ նպատակ. 3.3 Բարձրագույն կրթության մատչելիության բարձրացում

Խնդիր. 3.2.1 Արտոնյալ քաղաքականության ապահովում և աջակցություն

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների բարձրագույն կրթություն ստանալուն աջակցության նպատակով 2010 թվականից գործում է «Վրաց լեզվի պատրաստության կրթական ծրագիր», որին ընդունելությունն իրականացվում է Ընդհանուր ունակությունները արխագերեն, օսերեն, ադրբեջաներեն կամ հայերեն լեզուներով թեստերի արդյունքների հիման վրա: Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների թվաքանակը, 2010 թվականի (247) համեմատությամբ վեց անգամ ավելի է:



3.3.1.1. Միասնական ազգային քննությունները միայն արխագերեն, օսերեն, ադրբեջաներեն և հայերեն ընդհանուր ունակությունների թեստերի արդյունքների հիման վրա ընդունված ուսանողների ֆինանսավորումը, ովքեր պետք է սովորեն վրաց լեզվից նախապատրաստության կրթական ծրագրով և ուսումը շարունակեն բակալավրիատի, ուսուցչի պատրաստության ինտեգրված բակալավրային-մագիստրային, դիպլոմավոր բժշկի/ատամնաբույժի կրթական ծրագրով


2018 թվականին ընդհանուր ունակությունների ադրբեջաներեն, հայերեն և օսերեն լեզուներով թեստերի արդյունքների հիման վրա, ուսումը շարունակելու իրավունք ձեռքբերեց 1231 դիմորդ: Այդ թվում.

- ❖ Ընդհանուր ունակությունների ադրբեջաներեն թեստի հիման վրա՝ 806,
- ❖ Ընդհանուր ունակությունների հայերեն թեստի հիման վրա՝ 424,

❖ Ընդհանուր ունակությունների օտերեն թեստի հիման վրա՝ 1,

2018 թվականի միասնական ազգային քննություններից միայն ընդհանուր ունակությունների աղբբեջանալեզու, հայալեզու և օսալեզու թեստերի արդյունքների հիման վրա պետական ուսումնական դրամաշնորհ ձեռք բերեցին 190 դիմորդներ.

- ❖ Ընդհանուր ունակությունների աղբբեջանալեզու թեստի հիման վրա՝ 96,
- ❖ Ընդհանուր ունակությունների հայալեզու թեստի հիման վրա՝ 93,
- ❖ Ընդհանուր ունակությունների օտերեն լեզվով թեստի հիման վրա՝ 1,



3.3.1.2.Վրաց լեզվից նախապատրաստության ծրագրի («1+4 ծրագրի») շրջանակներում, պաշտպանության ազգային ակադեմիայում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար սահմանվեց 16 տեղ

2018 թվականի դրությամբ, վրաց լեզվի նախապատրաստության ծրագրով («1+4 ծրագրի») շրջանակներում, պաշտպանության ազգային ակադեմիայում սովորում է 3 յունկեր (1ադրբեջանցի, 2 հայ): Վրաց լեզվից պատրաստության ծրագրով ընդունվել է 6 յունկեր (5 ադրբեջանցի, 1 հայ)

3.3.1.3/3.3.1.8 ՀԻԻԱ ՆԳՆ ակադեմիայի ուսումնական ծրագրերի մասին տեղեկատվության մատուցում Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին. Ուսումնական ծրագրերի մասին տեղեկատվության մատուցում Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին

Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմը առանձնահատուկ ուշադրություն հատկացրեց գիտակցության բարձրացման քարոզչությանը բարձրագույն կրթության ոլորտում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին հատկացված արտոնությունների և հնարավորությունների մասին: «Վրաց լեզվից նախապատրաստության հատուկ կրթական ծրագրի» մասին հանդիպումներ տեղի ունեցան Քվեմո Քարթլիի (Գարդաբանի մունիցիպալիտետ՝ գյուղ Նազարյո/Քոսալո), Կախեթի (Սագարեջոյի մունիցիպալիտետ՝ գյուղ Լամբալո, Յոբուդանլո, Դուգաբամա) և Սամցխե-Ջավախեթի (Ախալքալաքի մունիցիպալիտետ՝ քաղաք Ախալքալաքի, գյուղ Գումբուրդո, Դիլիսկա, Կուլիկամ, Տուրցխա, Կարծախ, Սուլդա) տարածաշրջաններում: Տեղեկատվական հանդիպումներին մասնակցում էին ՀԻԻԱ Գնահատման և քննությունների ազգային կենտրոնի, Ներքին գործերի նախարարության և Դավիթ Աղմաշենեբեղիի անվան ազգային պաշտպանության ակադեմիայի ներկայացուցիչները:

3.3.1.4Իրավապաշտպան հաստատությունների գործունեության մասին գիտակցության բարձրացում դպրոցի աշակերտների և ուսանողների համար (այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների)

ՆԳՆ մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտը ակտիվ մասնակցություն է ունենում հեռուստատեսային և ռադիո հաղորդումներին, այդ թվում տարածաշրջաններում, պարբերաբար վարում է տեղեկատվական բնույթի հանդիպումներ ուսանողների, դպրոցի աշակերտների և քաղաքացիական սեկտորի հետ իր լիազորությանը պատկանող հարցերի մասին գիտակցության բարձրացման նպատակով: Այս տեսակետից հատկանշական են դեպարտամենտի կողմից իրականացված հետևյալ ակտիվությունները.

- ❖ Ներքին գործերի նախարարության մարդու իրավունքների պաշտպանության և տարածաշրջանների ոստիկանության դեպարտամենտների աշխատակիցները, կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի 16-օրյա ընթացակարգի շրջանակներում Թբիլիսիում, Կախեթում, Շիդա Քարթլիում, Քվեմո Քարթլիում անցկացրեցին 12 հանդիպում: Հանդիպումների նպատակն էր կանանց նկատմամբ և ընտանիքում կատարված բռնության տեսանկյունից բնակչության իրազեկվածության աճը, ինչպես նաև այս տեսանկյունից գործող օրենսդրության

և գոյություն ունեցող պետական սերվիսների մասին տեղեկատվությանը ծանոթացումը:

- ❖ Թբիլիսիում, Մառնեուլիում, Թելավիում, Լագոդեխում, Գուրջասանիում, Դմանիսիում, Բաթումիում, ինչպես նաև այլևայլ համալսարաններում և կրթական հիմնարկություններում, ընտանիքում բռնության մասին անցկացված հանդիպումներին ընդհանուր առմամբ ներկա էր շուրջ 400 մարդ:

3.3.1.5 Վրաց լեզվից պատրաստության կրթական ծրագրի (1+4 ծրագիր) շրջանակներում ուսանողների ընդունելություն

ՀԻԻԱ Վրաստանի ներքին գործերի նախարարության ակադեմիայում, 2018 թվականին չի իրականացվել վրաց լեզվից պատրաստության կրթական ծրագրով անձանց ընդունելություն, քանզի «Բարձրագույն կրթության մասին» և «Ոստիկանության մասին» Վրաստանի օրենքներում իրականացված փոփոխություններին ախատեամամբ, բարձրագույն ուսումնական հաստատությունների լիազորագրման խորհրդի 2018 թվականի օգոստոսի 17-ի N47 որոշմամբ անվավեր ճանաչվեց ՀԻԻԱ Վրաստանի ՆԳՆ ակադեմիայի լիազորագրությունը:

3.3.1.6 Միասնական ազգային քննությունների նախապատրաստական նյութի մշակում/հրատարակում. ա) Ընտրովի առարկաներ ռուսերեն, բ) Ընդհանուր ունակություններից աղբբեջաներեն, հայերեն, ռուսերեն լեզուներով թեստեր

Ընդհանուր ունակություններից թեստերի ապահովում բոլոր այն լեզուներով, որոնցով կանցկացվեն քննությունները

Ընդհանուր ունակությունների թեստ ընտրեց.

- ❖ Աղբբեջաներեն լեզվով՝ 1580 դիմորդ,
- ❖ Հայերեն լեզվով՝ 602 դիմորդ,
- ❖ Ռուսերեն լեզվով՝ 592 դիմորդ,

Վրաստանի կրթության և գիտության նախարարի 2017 թվականի նոյեմբերի 17-ի «Միասնական ազգային քննությունների անցկացման դրույթի և պետական ուսումնական դրամաշնորհի բաշխման կանոնում» իրականացված փոփոխությամբ, միասնական ազգային քննություններին ընտրովի առարկաները չեն անցկացվում ռուսերեն լեզվով:

3.3.1.7. Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների բարձրագույն կրթության մատչելիության բարելավման նպատակով նրանց քննությունների մասին տեղեկատվության մատուցում (բաց դռների օրերի կազմակերպում)

Անցկացվեց երեք հանդիպում Գարդաբանի, Ախալքալաքի և Սագարեջոյի մունիցիպալիտետներում, ինչպես նաև Թբիլիսիում:

3.3.1.8 Ուսումնական ծրագրերի մասին տեղեկատվության հաղորդում Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին

Տես՝ 3.3.1.3

Միջանկյալ նպատակ. 3.4 Մասնագիտական և չափահասների կրթության ապահովում

Խնդիր. 3.4.1 Մասնագիտական ուսումնարաններում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության բարելավում, ինչպես նաև չափահաս բնակչության համար պետական լեզվի ուսուցման մատչելիության ապահովում

Ոչվրացալեզու դպրոցներում իրականացվեց «Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագիր»: Ծրագրի նպատակն է ոչվրացալեզու դպրոցների/սեկտորների ուսուցիչների մասնագիտական զարգացման աջակցություն և ուսում/ուսուցման որակի բարելավում պետական լեզվի ուսուցման ուժեղացման ճանապարհով: Ծրագիրը կողմնորոշված է (2016-2019թթ.) ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչների ինչպես առարկայական քննություններին նախապատրաստությանը, այնպես էլ նրանց պետական լեզվի դասավանդմանը:

Պետական լեզվի իմացության մակարդակի բարելավման ուղղությամբ գործունեությունը շարունակեց ՀԻԲՍ Զուրաբ Ժվանիայի անվան հանրային վարչարարության դպրոցը, որն իրականացրեց «Պետական լեզվի դասավանդման ծրագիր»: Ծրագրի շրջանակում հանրային սեկտորում զբաղված էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչները, տեղական ինքնակառավարման մարմինները, մարզային վարչությունների, կրթության նախարարության ռեսուրս կենտրոնների, հանրային դպրոցների աշխատակիցները և նաև ցանկացած շահագրգիռ անձ հնարավորություն ունի անվճար սովորելու պետական լեզուն դպրոցի ենթակայության ներքո գործող 10 տարածաշրջանային ուսումնական կենտրոններում և շարժական խմբերում, լեզվի տիրապետման A1, A2, A2+, B1, B1+ մակարդակի շրջանակներում:

3.4.1.1 Հանդիպումներ հանրակրթական հիմնարկություններում և ք. Ախալցխիսեում գոյություն ունեցող ՀԻԲՍ հասարակական քոլեջում «Օպիզարի» տարածաշրջանի սոցիալական և տնտեսական զարգացման ռազմավարության և գործնական պլանին ծանոթության, աշխատանքի շուկայի և պահանջարկ վայելող մասնագիտությունների մասին աշակերտներին իրազեկելու նպատակով:

3.4.1.2 Ոչվրացալեզու դատապարտյալների համար պետական լեզվի ուսումնական դասընթացի ապահովում

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցության շրջանակներում, 2018 թվականի ընթացքում N2; N3; N5; N14; N15; N16 և N17 պատժակատարողական հիմնարկություններում իրականացվեց վրաց լեզվի ուսուցում ոչվրացալեզու դատապարտյալների համար, «Վրացերենը որպես երկրորդ լեզու» ուսումնական ծրագրով: Դրանում ընդգրկված էր 113 բենեֆիցիար:

Հիմնարկության անվանում	Մասնակիցների թվաքանակ
N°2 Հիմնարկություն	15
N°16 Հիմնարկություն	11

№15 Հիմնարկություն	32
№5 Հիմնարկություն	19
№17 Հիմնարկություն	19
№14 Հիմնարկություն	11
№3 Հիմնարկություն	6
Ընդամենը	113

3.4.1.3 Մասնագիտական ուսումնարաններում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության բարելավում, ինչպես նաև չափահաս բնակչության համար պետական լեզվի ուսուցման մատչելիության ապահովում

Պետական լեզվի իմացության մակարդակի բարելավման ուղղությամբ գործունեությունը շարունակեց ՀԻԲԱ Զուրաբ Ժվանիայի անվան հանրային վարչարարության դպրոցը, որն իրականացրեց «Պետական լեզվի ուսուցման ծրագիր»:

Պետական լեզվի ուսուցման ծրագրով վերապատրաստվեց էթնիկ փոքրամասնության 3386 ներկայացուցիչ: «Ոչվրացալեզու դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի» շրջանակներում Մամգիսե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի և Կախեթի ոչվրացալեզու դպրոցների տեղական ուսուցիչների երկու հերթափոխի անցկացվեց պետական լեզվի ուսուցման դասընթաց, որին ընդգրկված էր 1080 ունկնդիր:

Հաշվետու ժամանակաշրջանում ծրագրի շրջանակներում իրականացվեցին հետևյալ միջոցառումները.

- ❖ Պետական լեզվի ուսուցման ծրագրի աշխարհագրական տարածքի ընդարձակման նպատակով հայտարարվեց և անցկացվեց ուսուցիչների ընտրության մրցույթ, որի արդյունքում ընտրվեց 14 ուսուցիչ,
- ❖ Դպրոցն իրականացրեց նախագիծ՝ «Մասնագիտական կրթության աջակցություն ազգային փոքրամասնությունների համար», որի նպատակն է օժանդակել և զարգացնել Վրաստանում մասնագիտական կրթությունը, օգնել էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչներին առավելագույնս դրսևորեն սեփական կարողությունները, լիարժեք տիրապետեն ցանկալի մասնագիտությունը, ակտիվորեն ընդգրկվեն հասարակական կյանքին և արժանի ներդրում ունենան երկրի զարգացման գործում: Նախագծի շրջանակներում ստեղծվեց 10 խումբ: Յուրաքանչյուրն ավարտեց աշխատանքը B1+ մակարդակի կոնկրետ ճյուղային ուղղության ձեռնարկի և աշխատանքային տետրի ստեղծման գործում:
- ❖ Պետական լեզվի ուսուցման ծրագրի շրջանակներում հաստատվեց երկու նոր ճյուղային ուղղություն՝ A2+ մակարդակ մանկավարժների համար, B1+ մակարդակ՝ քաղաքացիական կրթություն՝ ծրագիր, որի շրջանակներում ուսուցումը պիլոտային

- ռեժիմով իրականացվեց Քութախում, ՀԻԻԱ Ջուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցում, երկու խմբերում (ընդամենը էթնիկ փոքրամասնության 26 ներկայացուցիչ) առաջադեմ 18 շրջանավարտների փոխանցվեցին համապատասխան հավաստագրեր,
- ❖ Պետական լեզվի ուսուցման ծրագրի շրջանակներում հաստատվեց 10 նոր ճյուղային ուղղության B1+ մակարդակի ծրագիր. բուժքրոջ գործ, մանկավարժների համար, հաշվապահական հաշվարկ, ագրոնոմիա, էլեկտրիկություն, պարենային տեխնոլոգիաներ, զբոսաշրջություն, շինարարություն, անասնապահություն և տրանսպորտ,
 - ❖ Պետական լեզվի ուսուցման ծրագրի զարգացման, ծրագրում իրականացված փոփոխություններին ծանոթության, մանկավարժական պրակտիկայի փոխանակման, ճյուղային ուղղությամբ մանկավարժների ուսուցման իրականացման համար վարժանք անցկացնելու և մանկավարժներին գնահատելու նպատակով Քութախում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում. մարտին՝ 2-օրյա, 15 անձի կազմով, հունիսին՝ 4-օրյա, նախագծին ընդգրկված 50 մանկավարժի և տարածաշրջանային ուսումնական կենտրոնների ադմինիստրատորների մասնակցությամբ,
 - ❖ Պետական լեզվի ուսուցման ծրագրով դպրոցի 10 տարածաշրջանային ուսումնական կենտրոններում, որոնք գտնվում են Վրաստանի երեք տարածաշրջաններում. Քվեմո Քարթլի, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի, ուսումն ավարտեցին 2017 թվականին ընդունված 81 խմբի 1072 և 2018 թվականին ընդունված 145 խմբի էթնիկ փոքրամասնության 2058 ներկայացուցիչ,
 - ❖ Պետական լեզվի ուսուցման ծրագրի ավարտի կապակցությամբ 10 տարածաշրջանային ուսումնական կենտրոններում ամենամսյա անց էր կացվում վերջնական քննություն (թեստավորում-հարցազրույց), որին ներկա էին ՀԻԻԱ Ջուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցի ներկայացուցիչները և քննողներ,
 - ❖ Դպրոցիբոլոր տասը տարածաշրջանային ուսումնական կենտրոններում և շարժական խմբերում իրականացվեց ուսումնական գործընթացի մոնիթորինգ,
 - ❖ 2018 թվականին պետական լեզվի ուսուցման ծրագրի շրջանակներում ընդունվեց էթնիկ փոքրամասնության 3400 ներկայացուցիչ, ստեղծվեց 246 ուսումնական խումբ, դրանցից 171 շարժական խումբ 10 քաղաքներում և 67 գյուղերում,
 - ❖ 2018 թվականի սեպտեմբերից Ժվանիայի դպրոցը պետական լեզվի դասընթացներ է իրականացնում դաշտային-զինավարժության հենակայաններում Վրաստանի զինված ուժերի պարտադիր զինվորական ծառայությունում ծառայող էթնիկ փոքրամասնության ներկայացուցիչների համար, ովքեր անցնում են սկզբնական մարտական պատրաստություն: A1 մակարդակի լեզվի դասընթաց անցավ էթնիկ փոքրամասնության 300 ներկայացուցիչ,
 - ❖ ՀԻԻԱ Ջուրաբ Ժվանիայի անվան պետական վարչարարության դպրոցը UNHCR-ի տարածաշրջանային ներկայացուցչության հետ միասին իրականացրեց նախագիծ՝

- «Մովորիր վրացերեն ատլիո դասերով», որի շրջանակներում պատրաստվեց կոմպակտ սկավառակ, 12 ատլիո դասով և համապատասխան նկարազարդումներով: Դասընթացը կօգնի միջազգային պաշտպանության ներքո գտնվող, ապաստարան և քաղաքացիություն չունեցող անձանց, որոնց վրա տարածվում է UNHCR-ի մանդատը վրաց լեզվի բազիսային գիտելիք ստանալու ուղղությամբ,
- ❖ Դպրոցի կողմից պատրաստված բոլոր ձեռնարկները և նշված ատլիո դասերը տեղադրվեցին դպրոցի պաշտոնական կայք-էջին www.zspa.ge (ատլիո դասեր նաև UNHCR-ի գործընկերկայք-էջերին է): Էլեկտրոնային ռեսուրսները անվճար է բոլոր ցանկացողների համար,
 - ❖ Պետական լեզվի ժողովրդականացման նպատակով դպրոցը հայտարարեց էսսեների մրցույթ՝ «Մեր սերնդի առավելությունը», պարզևատրվեցին հաղթողները,
 - ❖ Հանրային կառավարման և վարչարարության ծրագրի շրջանակներում ստեղծվեց կարճաժամկետ մասնագիտացված ուսումնական վարժանք դասընթացներ, ինչպես նաև արտագնա վարժանք դասընթաց, ընդամենը 16 ուղղություն,
 - ❖ Հանրային կառավարման և վարչարարության ծրագրից 2018 թվականին օգտվեց 307 անձ, այդ թվում էթնիկ փոքրամասնության 48 ներկայացուցիչ,
 - ❖ «Գործավարություն և էլեկտրոնային կառավարում» վարժանք դասընթաց իրականացվեց 9 մունիցիպալիտետում (Ախալքալաք, Բոլնիսի, Ախմետա, Դեդոփլիսձղարո, Լանչխութի, Չխորձղու, Ծալկա, Ճիաթուրա, Քութաիսի): Դրանց մասնակցեց և հավաստագիր փոխանցվեց 193 ունկնդրի,
 - ❖ Կախեթի տարածաշրջանում իրականացվեցին վարժանք դասընթացներ «Մարդկային ռեսուրսների կառավարում» և «Հասարակայնության հետ հարաբերություն և հաղորդակցություն»: Դրանց մասնակցություն ունեցան 22 տարբեր մունիցիպալիտետների քաղաքապետարանների, սակրեբուլոնների և նահանգապետարանի աշխատակիցներ,
 - ❖ Ռուսթավում իրականացվեցին վարժանք դասընթացներ «Քաղաքացիների արդյունավետ սպասարկության տեխնոլոգիաներ», դրան մասնակցեց 10 անձնավորություն,
 - ❖ Համակարգչային տեխնոլոգիաների ուսուցման բազիսային ծրագրով վերապատրաստում անցավ 82 հանրային ծառայող:

Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի և կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության սերտ համագործակցության շրջանակներում վրաց լեզվի ուսուցման դասընթացներ բացվեցին Նինոծմինդայի մունիցիպալիտետի Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու թեմում:

3.4.1.4 Մասնագիտական թեստավորման անցկացում ուսերեն, աղբբեջաներեն կամ հայերեն լեզուներով, դիմողների կողմից միայն մասնագիտական կրթական ծրագրի շրջանակային փաստաթղթի հիման վրա ստեղծված մասնագիտական կրթական ծրագրերի ընտրության դեպքում

2018 թվականի գարնանը կազմակերպված մասնագիտական թեստավորմանը քննական առարկայի լեզու ընտրեց/քննություն հանձնեց.

- ❖ Աղբյուրներեն լեզվով – 10 ապլիկանտ և դրանցից ոսումնառության իրավունք ձեռք բերեց 7 ապլիկանտ:
- ❖ Հայոց լեզվով – 3 ապլիկանտ,
- ❖ Ռուսաց լեզվով – 26 ապլիկանտ և դրանցից ուսման իրավունք ձեռք բերեց 14 ապլիկանտ:

2018 թվականի աշնանը կազմակերպված մասնագիտական թեստավորմանը քննական առարկայի լեզու ընտրեց.

- ❖ Աղբյուրներեն լեզու – 12 ապլիկանտ, նրանցից ուսման իրավունք ձեռք բերեց 10 ապլիկանտ,
- ❖ Հայոց լեզու – 7 ապլիկանտ և նրանցից ուսման իրավունք ձեռք բերեց 4-ը,
- ❖ Ռուսաց լեզու – 34 ապլիկանտ և նրանցից ուսման իրավունք ձեռք բերեց 18-ը:

Մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական կրթական հիմնարկություններում 2018 թվականի գարնանային և աշնանային ընդունելությանը մասնագիտական թեստավորումը ռուսերեն, հայերեն կամ աղբյուրներեն լեզվով անցնելու նպատակով գրանցվեց 123 անձ:

3.4.1.5. Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնագիտական կրթության մատչելիության բարելավում

Մառնեուլի մունիցիպալիտետում սկսվեցին նախապատրաստական աշխատանքներ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների համար մասնագիտական կրթության մատչելիության բարելավման, մասնավորապես նոր մասնագիտական կրթական հաստատության զարգացման նպատակով: Ընտրվեց երեք լոկալիտ, համապատասխան աշխատանքների հիման վրա նույնականացվեց նշված երեք լոկալիտներից մեկը, որի վրա տեղադրվեց նոր մասնագիտական կրթական հիմնարկության համապատասխան շինությունը: Պլանավորվեցին ենթակառուցվածքային աշխատանքներ վարելու համապատասխան փուլերը:

3.4.1.6.Վրաց լեզվի մոդուլի ուսուցման ապահովումն այն մասնագիտության ուսանողների համար, ովքեր մասնագիտական թեստավորում անցան ոչվրացերեն լեզվով

2018 թվականին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական կրթական հաստատություններում վրաց լեզվի մոդուլի ուսուցմանը ընդգրկվեց 44 անձ:

3.4.1.7Ստաժավորում «1+4 ծրագրից» օգտվող անձանց համար՝ դիտեք 1.3.2.3-1.3.2.4

3.4.1.8Էթնիկ փոքրամասնությունների չափահաս ներկայացուցիչների լեզվական պատենշի հաղթահարման նպատակով, վրաց լեզվի ուսուցման դասընթացների ապահովում

Ք.Թբիլիսիի Սակրեբուլոյի կողմից հիմնադրված «Բարեկամության տանը» շարունակվում է վրաց լեզվի ուսուցման ծրագիրը: Նշված նախագիծն իրականացվում է նախագահի հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ, Թբիլիսիի պետական համալսարանի հետ համագործակցությամբ: Ծրագիրը սկսվել է 2017 թվականի փետրվարի 1-ից: 2017 թ. 132 ունկնդրից առաջադիմորեն ավարտեց 110 ունկնդիր և նրանց հանձնվեցին հավաստագրեր: 2018 թվականին փոխվեց դասընթացի տևողությունը և ընդգրկում է 2 ամիս, պարապմունքներն ընթանում են շաբաթական 3 օր: 230 ունկնդրից դասընթացը գերազանց ավարտեց 210-ը և նրանց փոխանցվեց դասընթացն անցնելը հաստատող վկայականներ:

Ռազմավարական նպատակ 4

Էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանում և հանդուրժողական միջավայրի խրախուսում

Միջանկյալ նպատակ. 4.1 Մշակութային քաղաքականության մշակմանը և իրականացմանը էթնիկ փոքրամասնությունների դերի և նշանակության արտացոլում

Խնդիր. 4.1.1 Տարածաշրջանային և տեղական միավորների հետ էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանմանն ուղղված գործունեության բարելավման, համակարգման ապահովում

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվեց տարբեր ծրագրերի/նախագծերի և միջոցառումների իրականացումը, ինչը նպատակաուղղված էր էթնիկ փոքրամասնությունների մշակույթի պահպանության-գարգացման/ժողովրդականացմանը և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների մշակութային ժառանգության պաշտպանությանը: Մշակութային ինքնադրստորման աջակցության և հետագա ինտեգրման նպատակով շարունակվեց թանգարանների և թատրոնների գործունեության աջակցությունը ֆինանսական աջակցության ապահովման ճանապարհով:

4.1.1.1 Մշակութային բազմազանության օր - «Պանկիտրա», Նովրուզ-բայրամի տոնի կապակցությամբ անցկացված միջոցառումներ, տարհանվածների միջազգային օր, գրական երեկոներ, մարզական և մշակութային միջոցառումներ

4.1.1.2 Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանում անցկացվելիք մշակութային միջոցառումներին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների ընդգրկման ապահովում-պլանավորված է 154 միջոցառման անցկացում - 3633490 լ

Էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող վարչական միավորներում գործում են ակումբային հիմնարկություններ, ստեղծվել են երգի և պարի համույթներ, գործում են երաժշտական դպրոցներ: Ախալքալաքում և Ախալցխեում գործում են նկարչական դպրոցներ, որոնք անընդհատ մասնակցում են տեղական, հանրապետական կամ միջազգային ցուցահանդեսներին: Դրա հետ միասին մշակութային ավանդույթների պաշտպանության նպատակով տեղական բյուջեների

Ֆինանսավորմամբ իրականացվում է տարբեր մշակութային օբյեկտների գործունեությանը անհրաժեշտ ֆինանսական աջակցություն և մշակութային միջոցառումների կազմակերպում:

Հաշվետու ժամանակաշրջանում էթնիկ փոքրամասնությունների մշակութային ինքնակերպի պահպանության և զարգացման նպատակով անցկացվեցին շատ միջոցառում, ի մասնավորի. Նինոծմինդայի մունիցիպալիտետում՝ 55 միջոցառում, Ախալքալաքի մունիցիպալիտետում՝ 59 միջոցառում, Ախալցխի մունիցիպալիտետում՝ 41 միջոցառում, Բորջոմի մունիցիպալիտետում՝ 4 միջոցառում, Ասպինձայի մունիցիպալիտետում՝ 2 միջոցառում:

4.1.1.3. Էթնիկ փոքրամասնությունների ՀԻԻԱ կազմակերպությունների գործունեության աջակցություն՝ բեմադրություններ, հյուրախաղեր, ցուցահանդեսներ, հրատարակություններ, համերգներ

Թանգարանների աջակցություն.

- ❖ **ՀԻԻԱ Միրզա Ֆաթալի Ախունդովի անվան ադրբեջանական մշակույթի թանգարանը** հյուրընկալեց ադրբեջանցի երեխաների աշխատանքների ցուցահանդեսը և ադրբեջանցի երիտասարդ նկարիչ Ֆուադ Բաբազադեի աշխատանքների անհատական ցուցահանդեսը, 2 վավերագրական ֆիլմի ցուցադրում, 2 մշակութային-ճանաչողական միջոցառում, 2 գրքի շնորհանդես: Տարվա ընթացքում ֆինանսավորվեց 37 000 լարիով,
- ❖ **ՀԻԻԱ Դավիթ Բաազովի անվան Վրաստանի հրեաների և վրաց-հրեական հարաբերությունների պատմության թանգարանը** 2018 թվականի ընթացքում անցկացրեց շուրջ 40 միջոցառում Վրաստանի հրեաների պատմության ցուցադրության և վրաց-հրեական բարեկամական հարաբերությունների զարգացման համար. հանդիպումներ, երեկոներ, դասախոսություններ, անհատական ցուցահանդեսներ, համերգներ: Թանգարանի միջազգային շաբաթի շրջանակներում թանգարանում անցկացվեց ակցիա՝ «Գիշերը թանգարանում», որը նվիրվեց Իսրայելի պետականության վերականգնման 70 և Վրաստանի ժողովրդավարական Հանրապետության հռչակման 100 ամյակներին: Տարվա ընթացքում թանգարանի մշտական և ժամանակավոր էքսպոզիցիաները դիտեց 2800 այցելու, միջոցառումներին մասնակցեց 2000 մասնակից: Տարվա ընթացքում ֆինանսավորվեց 115 000 լարիով:
- ❖ **ՀԻԻԱ Սմիռնովների թանգարանը** տարվա ընթացքում 14 միջոցառում հյուրընկալեց. պոեզիայի երեկոներ, կինոցուցադրություններ, դասախոսություններ, էքսպոզիցիաներ: Եվրոպայի ժառանգության օրվա շրջանակներում ցուցադրվեցին թանգարանում պահպանված գերմանական ցուցանմուշները: Տարվա ընթացքում ֆինանսավորվեց 63216 լարիով:

Աջակցություն թատրոններին.

- ❖ **ՀԻԻԱ Հեյդար Ալիևի անվան Թբիլիսիի ադրբեջանական պրոֆեսիոնալ** պետական դրամատիկական թատրոնը, **ՀԻԻԱ Ալեքսանդր Գրիբոյեդովի անվան պրոֆեսիոնալ** ռուսական դրամատիկական թատրոնը, **ՀԻԻԱ Պետրոս**

Ադամյանի անվան պրոֆեսիոնալ հայկական դրամատիկական թատրոնն անցկացրեցին ընդհանուր առմամբ 192 ներկայացում, այդ թվում ստացիոնարով 142, պրենիերա՝ 7, արտագնա տարածաշրջաններում՝ 34, հյուրախաղային բեմադրություն՝ 16: Ընդհանուր առմամբ տարվա ընթացքում բեմադրություններին ներկա է եղել 39767 հանդիսատես: Տարվա ընթացքում ֆինանսավորվեց 215 000 լարիով:

- ❖ **ՀԻԲԱ Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պրոֆեսիոնալ պետական հայկական դրամատիկական թատրոնը** տարվա ընթացքում ֆինանսավորվեց 215 000 լարիով,
- ❖ **ՀԻԲԱ Ալեքսանդր Գրիբոյեդովի անվան ռուսական պրոֆեսիոնալ պետական դրամատիկական թատրոնը** տարվա ընթացքում ֆինանսավորվեց 1 900 000 լարիով,

4.1.1.4/4.2.1.3 Մշակութային միջոցառումների աջակցություն,

Թբիլիսիի սակրեբուլոն, «Ազգային փոքրամասնությունների խորհրդի» միջոցով, ընդգրկված է ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքում և նրանց հետ միասին նշում է բոլոր կարևոր տոները. «Նովրուզ Բայրամ», ծաղիկների փառատոն «Վարդատոն», առաջադեմ քուրդ-եզդի կանանց պարզևատրում, լատվիացի նկարիչների հիշատակի երեկո, «Ուկրաինական գարուն իմ փողոցին» և այլն: Հաշվետու ժամանակաշրջանում Թբիլիսիի սակրեբուլոն անցկացրեց շուրջ 10 տարբեր միջոցառում

Միջանկյալ նպատակ. 4.2 Էթնիկ փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանում և ժողովրդականացում

Խնդիր. 4.2.1 Էթնիկ փոքրամասնությունների նյութական և ոչնյութական մշակութային արժեքների պաշտպանություն

4.2.1.1 Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության համաֆինանսավորմամբ, գերմանական մշակութային ժառանգության մասին «Գերմանացի գաղութաբնակների ճարտարապետական ժառանգությունը Վրաստանում» - հրատարակություն (3 լեզվով) և հանրային շնորհանդեսներ Թբիլիսիում և տարածաշրջաններում, ներկայացում Ֆրանկֆուրտի տոնավաճառին

Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին գործերի նախարարության համաֆինանսավորմամբ, լույս ընծայվեց գերմանական մշակութային ժառանգության մասին եռալեզու հրապարակում՝ «Գերմանացի գաղութաբնակների ճարտարապետական ժառանգությունը Վրաստանում»:

4.2.1.2 Ցուցահանդես՝ «Կրոնները Վրաստանում» - ՀԻԲԱ – Վրաստանի ազգային թանգարանի Միմոն Ջանաշիայի անվան Վրաստանի թանգարան ՀԻԲԱ – Վրաստանի ազգային թանգարանի և Կրոնի հարցերով պետական գործակալության կազմակերպմամբ, Միմոն Ջանաշիայի անվան Վրաստանի թանգարանում 2018 թվականի հունվարի 30-ից առ մարտի 30-ը կայացավ «Կրոններ Վրաստանում» ցուցահանդեսը: Ցուցադրված էին տարբեր կրոնների Սուրբ գրքերը և

գրականությունը, կրոնական հագուստը և ատրիբուտները, պատմական լուսանկարներ և փաստաթղթեր: Յուցահանդեսի նպատակը ներկայացնում էր կրոնական կազմակերպությունների իրազեկվածության մեծացումը, ներողամտությունը և փոխադարձ հարգանքի հաստատումը:

4.2.1.3 - Տես՝ 4.1.1.4

4.2.1.4 «Ճանաչիր Վրաստանը» նախագծի շրջանակներում ծանոթության փուլի կազմակերպում Դմանիսի մունիցիպալիտետում տեղական զբոսաշրջային կարողության և մշակութային ժառանգության ժողովրդականացման նպատակով

«Պտտվիր Վրաստանով» նախագծի շրջանակներում Գարդաբանի մունիցիպալիտետում անցկացվեցին արտագնա տուրեր, որին մասնակցեց էթնիկ փոքրամասնությունների 35 երիտասարդ, ընդհանուր առմամբ անցկացվեց 9 տուր: Նմանապես Քվեմո Քարթլիի նախանգապետի նախաձեռնությամբ անցկացվեց մեդիա տուր Դմանիսի և Բոլնիսի մունիցիպալիտետներում, որին մասնակցեցին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ լրագրողներ:

Միջանկյալ նպատակ. 4.3. Մշակութային բազմազանության խրախուսում

Խնդիր. 4.3.1 Միջմշակութային երկխոսության զարգացում

Անցկացվեցին մի քանի միջոցառումներ, որոնց նպատակն էր էթնիկ փոքրամասնությունների մշակույթի ծանոթացում/ժողովրդականացումը, միջմշակութային երկխոսության աջակցությունը:

4.3.1.3 Համամշակութային ծրագրերի և մարզական միջոցառումների անցկացում պատժակատարողական հիմնարկներում

2018 թվականին, պատժակատարողական հիմնարկներում ակտիվորեն ընթանում էին տարբեր մշակութային-ճանաչողական և մարզական միջոցառումներ: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պատժակատարողական հիմնարկություններում իրականացվեց 176 մշակութային և 39 մարզական միջոցառում: Միջոցառումներին այլ դատապարտյալների հետ միասին, ակտիվորեն միացած էին էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները:

4.3.1.4 Պոետ Մայա Մարգոշվիլիի բանաստեղծությունների և նովելների ժողովածուի շնորհանդես

Դիտեք՝ Պանկիսի կիրճի զարգացման ծրագիր

4.3.1.5 Նկարիչ Վարազդատ Մինասյանի նկարների ցուցահանդես

Հունիսի 4-ին Ազգային գրադարանի ցուցահանդեսային դահլիճում կայացավ նկարիչ Վարազդատ Մինասյանի նկարների ցուցահանդեսը:

Լրացուցիչ միջոցառումներ.

- ❖ Էթնիկ բազմազանության ինտերակտիվ քարտեզի շնորհանդես՝ մարտի 2-ին Ազգային գրադարանի կոնֆերանսների դահլիճում կայացավ «Ազգային պատկանելության և բազմամշակույթի ուսումնասիրման կենտրոն» Վրաստանի էթնիկ բազմազանության ինտեռակտիվ քարտեզի շնորհանդեսը,
- ❖ Մզհա Խթթագուրիի Բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդես՝ ապրիլի 26-ին Ազգային գրադարանի ցուցահանդեսային դահլիճում կայացավ Մզհա Խթթագուրիի «Իրավունքների իրավունք» Բանաստեղծական ժողովածուի ներկայացնելը,
- ❖ Գրադարանի Բացում Չանավ գյուղում՝ մայիսի 7-ին Ազգային գրադարանի «Էկվիլիբրիում» շարժումն այցելեց Ադիգենի մունիցիպալիտետի մուլտիէթնիկ Չանավ գյուղ: Չանավի մարզա-մշակութային կենտրոնում Բացվեց վրացական գրադարան,
- ❖ Միջոցառում՝ «Կնոջ դերը տարբեր էթնոսներում և կրոններում» -նոյեմբերի 1-ին կայացավ Ազգային գրադարանի կոնֆերանսների դահլիճում՝ «Կնոջ դերը տարբեր էթնոսներում և կրոններում»:

4.3.1.9 Մրցույթ կենտրոնում և տարածաշրջաններում մշակութային միջոցառումների և ընդհանուր մշակութային կյանքին ինտեգրումն արտացոլող մշակութային միջոցառումներին աջակցության համար

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարված մրցույթների արդյունքում ֆինանսավորվեցին հետևյալ նախագծերը.

- ❖ «Ես իմ Վրաստանի նկարիչն եմ՝ Բասե Չաֆարովա՝ 75» - Ո(Ո)ԻԱ Կանանց իրավունքների համայնքային նախաձեռնություն նախագծի շրջանակներում կազմակերպվեց առաջին եզրի կին նկարիչ Բասե Չաֆարովայի աշխատանքների ցուցահանդեսը: Նկարչուհու աշխատանքները ցուցադրվեցին Թբիլիսիում, Թելավում և Բաթումում,
- ❖ «Գնչուների մշակույթի փառատուն» - Ո(Ո)ԻԱ Զինաթափում և ոչքոնություն – ք.Թբիլիսիում անցկացվեց գնչուների երկօրյա փառատուն, որի շրջանակներում անցկացվեցին սեմինարներ, կոնֆերանս և տեղի ունեցավ գնչուական մշակույթի երեկո, որին մասնակցեցին գնչուների համայնքի ներկայացուցիչ երգիչներ և պարողներ,
- ❖ «Հնագույն ավանդույթների սրտակիցներ» - ասորական երիտասարդական «Նինեվիա» կազմակերպություն – նախագծի շրջանակներում տեղի ունեցավ Վրաստանում գործող ասորացի բժիշկ, թարգմանիչ Ֆրեյդուն Աթուրաիայի (Բիլ-Աբբամ) ստեղծագործական երեկոն, որին մասնակցեցին նշված էթնիկ խմբի ներկայացուցիչներ ԱՄՆ-ից, Նիդեռլանդներից, Շվեդիայից: Կազմակերպվեց Ֆ.Աթուրաիայի մասին նկարահանված ֆիլմի ցուցադրություն, պոեզիայի երեկո, տրվեց համերգ,
- ❖ «Լեսիա Ուկրաինկայի հետքը Վրաստանում» - Ո(Ո)ԻԱ Լրագրողների միություն «Վրաց-ուկրաինական մամուլի և գրքի տուն» - նախագծի շրջանակներում անցկացված հետազոտական աշխատանքի արդյունքում հաստատվեց «Լեսիա Ուկրաինկայի հետքը Վրաստանում» զբոսաշրջային արահետը, հրատարակվեց ուղեցույց-բուկլետ զբոսաշրջիկների, էքսկուրսավարների և այլ շահագրգիռ անձանց համար,

- անցկացվեցին վարպետության դասեր ուկրաինական ավանդական ասեղնագործության թեմայով,
- ❖ **«Ապակում կենդանացած զարդանախշ» - ՄՊԸ «Արտ Ֆյուզինգ գլաս»**-նախագիծը նախատեսում էր Ախմետայի մունիցիպալիտետի բնակիչների համար անցկացնել ապակու վրա աշխատանքի տեխնիկայի և ավանդական զարդանախշերի մշակման ուսուցողական դասընթաց: Հունիսի 29-ին Կվետերայի բերդ-քաղաքում տեղի ունեցավ «Կվետերոբա» փառատոն և կազմակերպվեց էթնիկ փոքրամասնությունների կողմից ստեղծված աշխատանքների ցուցահանդես:
 - ❖ **Միջմշակութային հարաբերությունների աջակցություն» - Կախերթի տարածաշրջանային զարգացման հիմնադրամ** – քաղաք Ախմետայում, Իլտոյի կիրճում գտնվող Կվետերաբերդ-ամրոցի տարածքում կազմակերպվեց տարբեր տեսակի ցուցահանդես, որտեղ ներկայացված էր տարբեր անկյունների և էթնոսների մշակույթը, այդ թվում. ձեռագործ աշխատանքեր, ազրո-արտադրանք, թաղիքի, կավի, գործվածքի նմուշներ, տեղում պատրաստվեցին ավանդական կերակրատեսակներ, տրվեց համերգ տեղական համույթների մասնակցությամբ,
 - ❖ **«Հայկական ավանդական տոն «Կաթնապուր» -Ո(Ո)ԻԱ կրթա-մշակութային և երիտասարդական կենտրոն «Հայարտան»** - նախագծի շրջանակներում Նինոծմինդայի շրջանի Փոքր Խանչալի գյուղում նշվեց «Ծաղիկների տոնը», այսինքն՝ «Կաթնապուրը», որին մասնակցություն ունեցան Նինոծմինդայի մշակույթի տան երաժշտական համույթները, «Հայարտան» կենտրոնի երիտասարդ արվեստագետները, Փոքր Խանչալի գյուղի հանրային դպրոցի աշակերտները, վրացերեն և հայերեն լեզուներով ներկայացվեց տոնի պատմությունը և ավանդույթը,
 - ❖ **«Մշակույթի և հասարակական հայտնի գործիչ Ալիխան Բինաթովի հոբելյանական երեկո և ադրբեջանական բանահյուսության և ժողովրդական ձեռքի աշխատանքի վարպետների աշխատանքների ցուցահանդես և վարպետության դաս» -Ո(Ո)ԻԱ «Դեմոս» միություն** – նախագծի շրջանակներում ք. Մառնեուլիում կազմակերպվեց փառատոն «Այլ Վրաստան որտեղ կա», որի նպատակն էր դեռահասներին և երիտասարդներին սովորեցնել վրացական երգը: Փառատոնի շրջանակներում նշվեց ադրբեջանական մշակույթի օրը և անցկացվեց Ալիխան Բինաթովի հոբելյանական երեկոն, կազմակերպվեց նրա գործունեությունն արտացոլող լուսանկարչական նյութի ցուցահանդես,
 - ❖ **«Ժողովրդական տոն «Կոստաոբա» -Ո(Ո)ԻԱ Կովկասյան խճանկար** –նախագծի շրջանակներում, Լագոդեխում, Արաշիերան գյուղում անցկացվեց ժողովրդական տոն՝ «Կոստաոբա»: Տեղի ունեցավ ձիարշավ, տարբեր տեսակի սպորտային և մշակութային միջոցառումներ, տեղական արվեստի աշխատանքների ցուցահանդես, վրաց և օսական կերակուրների համատեսում,
 - ❖ **«Հին Թբիլիսիի թատերական-գրական բռնեմ» հայկական, եբրայական և ադրբեջանական մշակութային ավանդույթներ» - Ո(Ո)ԻԱ Մուղիա «Աստերոիդ» - Մ.Թումանիշվիլիի թատրոնում տեղի ունեցավ երկու գրքի՝ Յոսեֆ Գրիշաշվիլիի «Հին Թբիլիսիի գրական բռնեմ» և ներկայացվեցին հայտնի թբիլիսեցի աշուղ բանաստեղծ Սայաթ-Նովայի հազվագյուտ հրատարակությունները: «Մտվերների թատրոն»-ը էֆֆեկտների կիրառմամբ ներկայացրեց եբրայական, ադրբեջանական և հայկական բանահյուսության, պարարվեստի, ծիսակատարությունների ավանդույթներն արտացոլող գրական-երաժշտական կոմպոզիցիա: Ճեմարահում կազմակերպվեց**

Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ ուսանողների ստեղծած կիրառական արվեստի նմուշների և լուսանկարների ցուցահանդես,

- ❖ «Մեմորիա» (Մերգո Չախոյանցի (1924-2009) ցուցահանդեսի կազմակերպում) ՄՊԸ «Ցարտի» - նախագծի շրջանակներում հայտնաբերվեցին Ս.Չախոյանցի աշխատանքները, կազմակերպվեց ցուցահանդես (50 գեղանկար և 50 գրաֆիկական աշխատանք): Հրատարկվեց ալբոմ:

Նշված նախագծերի շրջանակներում անցկացված միջոցառումներին ներկա էր շուրջ 2500 անձ:

4.3.1.10 Մրցույթ էթնիկ փոքրամասնությունների կենցաղի և մշակութային ինքնատիպության ու վրացական մշակութային տարածությունում ինտեգրումն արտացոլող ալբոմների հրատարակության համար

- ❖ Պատրաստվեց գիրք – Ալբոմ՝ «Պանկիսը և քիստերը», որի նպատակն է քիստերի նյութական մշակույթի ժողովրդականացումը Վրաստանում և արտասահմանում,
- ❖ ՀԻԻԱ Գիտրգի Չուբինիշվիլիի անվան վրացական արվեստի պատմության և հուշարձանների պահպանության ազգային հետազոտական կենտրոնի կողմից պատրաստվեց և հրատարակվեց գիրք՝ «Վրաց-հունական հարաբերություններ»,
- ❖ ՀԻԻԱ թատրոնի, երաժշտության, կինոյի և պարարվեստի թանգարանի կողմից հրատարակության պատրաստվեց գիրք-ալբոմ «Եվրոպացի նկարիչներ»: Նախագծի նպատակն է տարբեր պետական կամ մասնավոր հավաքածուներում պահպանված Վրաստանում գործող եվրոպացի նկարիչների աշխատանքների հավաքում և կուտակում մեկ հրատարակության մեջ,
- ❖ ՀԻԻԱ Թբիլիսիի Վանո Սարաջիշվիլիի անվան կոնսերվատորիայի գործունեության շրջանակներում պատրաստվեց գիրք-ալբոմ «Քիստերի ավանդական երաժշտությունը»:

4.3.1.11 Նախագիծ «Բազմազան Վրաստան»

Իրականացվեց նախագիծ «Բազմազան Վրաստան», որը նպատակաուղղված էր էթնիկ փոքրամասնություններով հոծ բնակվող տարածաշրջաններում մշակութային-կրթական միջոցառումների իրականացմանը: Միջոցառումներ անցկացվեցին Բոլնիսում, Մառնեուլիում, Ախալցխիլեում, Ախալքալաքում, Նինոծմինդայում, Գարդաբանում, Պանկիսի կիրճում:

Նախագծի շրջանակներում անցկացվեցին հանդիպումներ (դասախոսական դասընթաց) գրողի, գիտնականի, արվեստագետների հետ հետևյալ թեմաներով. Առաջին հանրապետության 100-ամյակ, Ալեքսանդրե Ղազբեգի-170, Օթար Ճիլաձե – 85, Վրացական կինո-110, Եվրոպական ժառանգության տարի և այլն,

Մառնեուլիում նշվեց Շոթա Ռուսթավելիի օրը (15 մայիսի),

«Բազմազան Վրաստան» նախագծի շրջանակներում.

- ❖ Անցկացվեց 19 դասախոսություն/սեմինար, տարբեր տեսակի (11) ցուցահանդես տեղական և մայրաքաղաքից ժամանած արվեստագետների մասնակցությամբ,

- ❖ Վերջին ժամանակների կարճամետրաժ անիմացիոն և գեղարվեստական ֆիլմերի (7) ցուցադրում – ֆիլմերի քննարկում,
- ❖ Համերգ (2) և բեմադրություն (3),

Նախագծի շրջանակներում անցկացված միջոցառումներին ներկա էր շուրջ 6 000 բենեֆիցիար:

4.3.1.12 Մշակութային բազմազանության օրվան նվիրված միջոցառում

Մայիսի 21-ին, Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի, Վրաստանի կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարության հետ համագործակցության շրջանակներում, ինչպես նաև Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի աջակցությամբ, Թբիլիսիի պատմության թանգարանում տեղի ունեցավ մշակութային բազմազանության օրվան նվիրված միջոցառում: Միջոցառմանը մասնակցեցին Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները: Միջոցառման շրջանակներում 7 մունիցիպալիտետներում (Մառնեուլիում, Գարդաբանում, Ախալցխեում, Նինոծմինդայում, Դուխում, Ջոդոլոյում և Բիրկիանում) անցկացվեցին համերգներ և թեմատիկ հանդիպումներ:

4.3.1.13 Բազմազգ արվեստի փառատոն «Մեկ երկնքի տակ»

2010 թվականից, ամենամյա, տարեկան երկու անգամ անց է կացվում բազմազգ արվեստի փառատոն «Մեկ երկնքի տակ – մշակույթների երկխոսություն», որին մասնակցում են վրաց և Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդները: Տարվա ընթացքում համերգ տեղի ունեցավ ք. Թելավի երաժշտական ուսումնարանում (160 մասնակից) և ք. Թբիլիսիի պատանի հանդիսատեսի թատրոնում (200 մասնակից):

4.3.1.14 Առաջին քիստ լուսավորիչ և հոգևոր անձ Մաթե Ալբուֆաշվիլիի ծննդյան 165 ամյակին նվիրված հիշատակի երեկո

Դիտք ենթազուլիսը՝ «Պանկիսի կիրճի զարգացման ծրագիր»

4.3.1.15 Հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված միջոցառումների անցկացում

Պետական նախարարի աշխատակազմը հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված շաբաթվա շրջանակներում պլանավորեց և իրականացրեց բազմազան ծրագիր. Սամցխե-Ջավախեթի պետական համալսարանում անցկացվեց հանրային դասախոսություն, կայացան հանդիպումներ ք. Թբիլիսիում «Վրաց լեզվից պատրաստության կրթական ծրագրի» (1+4 ծրագրի) մասնակից ուսանողների և ստաժորների հետ, ինչպես նաև Ծալկայի մունիցիպալիտետի հանրային դպրոցի աշակերտների հետ: Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի հետ համագործակցության շրջանակներում տեղի ունեցավ հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված պաշտոնական ընդունելություն, որտեղ ներկայացված էին պետական նախարարի աշխատակազմի՝ «Ծանոթացիր բազմազան Վրաստանին» նոր նախագծի շրջանակներում պատրաստված տեսա-հոլովակները (5

տեսահոլովակ): «Ծանոթացիր բազմազան Վրաստանին» նախագծի նպատակն է ներկայացնել և հասարակությանը ծանոթացնել Վրաստանում բնակվող էթնիկ փոքրամասնություններին ներկայացուցիչների հաջողություններին: Հանդուրժողականության շաբաթի շրջանակներում պատրաստվեց նաև ներկայացում «Իմ բազմազան հայրենիքը» թեմայով, որի ցուցադրությունը տեղի ունեցավ Թբիլիսիում, հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված ընդունելությանը և նաև ք. Ախալցխեում, հանդուրժողականության շաբաթվա եզրափակիչ միջոցառման ժամանակ:

4.3.1.16- 4.3.1.19 Վայնախորի բանահյուսության փառատոն քաղաք Փոթիում

Դիտեք ենթագլուխը՝ «Պանկիսի կիրճի զարգացման ծրագիր»

4.3.1.17 Քիստ հասարակական գործիչ և գրող Գիգի Խորնաուլի 80-ամյա հոբելյանը Պանկիսի կիրճում

Դիտեք՝ ենթագլուխը՝ «Պանկիսի կիրճի զարգացման ծրագիր»

4.3.1.20 Փոքրաթիվ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչների կարիքների ուսումնասիրում

Կարիքների ուսումնասիրման նպատակով Պանկիսի կիրճում, մասնավորապես. Դուխում, Օմալոյում, Ջոդոլոյում և ք. Ախմտայում անցկացվեցին հանդիպումներ տարբեր թիրախային խմբերի հետ (Ավագների խորհրդի անդամներ, քիստ կանանց խմբի անդամներ, կրթական հաստատությունների և տեղական ինքնակառավարման ներկայացուցիչներ),

4.3.1.21 Էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ բարձրասարանցիների այցը ՆԳՆ ակադեմիա և Դավիթ Աղմաշենեբելիի անվան պաշտպանության ազգային ակադեմիա

«Եվրոպայի օրեր 2018»-ի շրջանակներում Դավիթ Աղմաշենեբելիի անվան ազգային պաշտպանության ակադեմիայում, պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ, անցկացվեց ուսումնական տուր, որին մասնակցեցին «Երիտասարդ եվրոպացի դեսպաններ» նախագծի մասնակիցները և պանկիսցի աշակերտները (50 աշակերտ),

4.3.1.22 Էսսեների մրցույթ էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդների համար

- ❖ Վրաց լեզվի օրվա կապակցությամբ, պետական նախարարի աշխատակազմը Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցությամբ, ոչվրացալեզու հանրակրթական հաստատությունների/սեկտորների աշակերտների համար անցկացրեց վրացալեզու բեմադրությունների մրցույթ «Իմ առաջին վրացերեն դերը» անվանումով: Մրցույթի նպատակը վրաց լեզվի ուսուցման գծով էթնիկ

փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտներին աջակցությունն էր, պետական լեզվով արտահայտչական լիազորությունների զարգացումը և ստեղծագործական ունակությունների հայտնաբերումը: Մրցութային աշխատանքների (ներկայացումների) գնահատման հանձնաժողովի կողմից բացահայտվեցին երեք մրցանակային և մրցատյանի սիմպատիա տեղերը: Հաղթողները պարգևատրվեցին,

- ❖ Պետական նախարարի աշխատակազմի ընդգրկմամբ իրականացվեց վրաց գեղագրության մրցույթի հաղթողների պարգևատրություն: Մրցույթին մասնակցում էին Քվեմո Քարթլիի տարածաշրջանի բոլոր յոթ մունիցիպալիտետների մասնավոր և հանրային դպրոցների II-XII դասարանների շուրջ 800 աշակերտ: Նրանցից բացահայտվեց 64 հաղթող: Մրցույթի նպատակը գեղագրության արվեստի ժողովրդականացումն էր, այդ թվում էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչ աշակերտների համար:

4.3.1.24 Աջակցություն «Թբիլիսիի բարեկամության տուն» նախագծին

Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ գործունեությունը շարունակեց ք. Թբիլիսիի մունիցիպալիտետի Սակրեբուլոյին առընթեր գոյություն ունեցող «Բարեկամության տունը», որի աջակցությամբ անցկացվեց շուրջ 20 մշակութային-ճանաչողական միջոցառում:

4.3.1.25 Բաթումիում գործող էթնիկ փոքրամասնությունների կողմից պլանավորված 50-ից ավելի միջոցառումների ֆինանսավորում

Ք.Բաթումիում մունիցիպալիտետի քաղաքապետարանի կողմից ֆինանսավորվեց շուրջ 30 տարբեր միջոցառում:

4.3.1.26 Պետական միջգերատեսչական հանձնաժողովի նիստեր

Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի համակարգմամբ, կայացավ պետական միջգերատեսչական հանձնաժողովի նիստ, որտեղ քննարկվեց 2017 թվականի գործնական պլանի հաշվետվությունը և 2018 թվականի գործնական պլանը:

Լրացուցիչ գործունեություն

- ❖ Պետական նախարարի աշխատակազմի նախաձեռնությամբ և կազմակերպմամբ, Գարդաբանի մունիցիպալիտետի Ղարաջալա գյուղում բացվեց ժողովրդավարական ճանապարհով ընտրված առաջին մուսուլման կնոջ՝ Փարի-խանում Սոփիևայի հուշարձանը: 1918 թվականին Վրաստանի ժողովրդավարական Հանրապետության հռչակումից հետո Վրաստանի տարածքի հիմնական գավառներում անցկացվեցին աշխարհական ընտրություններ: Այդ թվում Թբիլիսիի գավառում, Ղարայազա մարզում:

Առաջատար կուսակցությունների՝ սոցիալ-ժողովրդավարների և դաշնայինների, «Հումմետիս», ազգային-ժողովրդավարների և էսսենների թեկնածուներին գերազանցեց անկուսակցական թեկնածուն, ազգությամբ ադրբեջանցի մուսուլման կինը՝ Փարի-խանում Սոփիևան և դարձավ Ղարայազի մարզից Թրիլիսիի գավառական աշխարհականների հինգերորդ խոսնակը: Նրա անվանն են վերագրվում մի շարք գործեր, այդ թվում հայրենի գյուղում երկաթգծի կայարանի շինարարությունը:

- ❖ Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ Կանանց միազգային օրվա կապակցությամբ Պանկիսի կիրճի Դուխի գյուղում կայացավ հանդիպում կիրճի մանկավարժների հետ:
- ❖ Հաշտության և քաղաքացիական հավասարության հարցերով Վրաստանի պետական նախարարի աշխատակազմի կազմակերպմամբ տեղի ունեցավ Վրաստանում բնակվող ժամանակակից ադրբեջանցի նկարիչների աշխատանքների ցուցահանդես: Ազեր Մոսաօղլուի, Ալի Ալիևի, Ռասիմ Գասանովի և Ռիզվան Իսմայիլովի տարբեր թեմաներով կատարված աշխատանքները հյուրընկալեց Գիորգի Լեոնիձեի անվան վրաց գրականության պետական թանգարանը:

Հավելված 1

Ենթակառույցի վերականգնում

Քվեմո-Քարթլիի տարածաշրջան

Ռուսթավի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 10 նախագիծ, գումարային 9 230 862 լարի արժողությամբ, այդ թվում՝ ՏՀՀ գումարը՝ 8 096 398 լարի:

Բուխիսի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 15 նախագիծ գումարային 5 679 483 լարի արժողությամբ, այդ թվում՝ ՏՀՀ գումարը՝ 4 055 520 լարի:

Գարդաբանի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 3 նախագիծ, գումարային 2 199 799 լարի ընդհանուր արժողությամբ, այդ թվում՝ ՏՀՀ գումարը՝ 2 089 809 լարի:

Դմանիսի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 9 նախագիծ, 2 452 475 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՀՀ գումարը՝ 1 888 579 լարի:

Թեթրիձղարո

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 6 նախագիծ, 3 430 449 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՀՀ գումարը՝ 3 262 574 լարի,
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից ֆինանսավորվեց 2 նախագիծ, 134 265 լարի արժողությամբ, այդ թվում՝ լեռան հիմնադրամի գումարը՝ 127 551 լարի:

Մառնեուլի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 15 նախագիծ, 6 533 463 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՀՀ գումարը՝ 3 291 155 լարի,

Ծալկա

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 5 նախագիծ, 4 206 178 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՉՀ գումարը 3 804 439 լարի:

Մամցիւե-Չավախեթի

Ախալցխիւե

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 13 նախագիծ, 7 465 903 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՉՀ գումարը 6 701 639 լարի:
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ախալցխիւեի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ, 800 000 լարի արժողությամբ, այդ թվում լեռան հիմնադրամի գումարը 760 000 լարի:

Ադիգենի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 3 նախագիծ, 2 498 600 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՉՀ գումարը 2 373 668 լարի:
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ադիգենի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ, 638 995 լարի արժողությամբ, այդ թվում լեռան հիմնադրամի գումարը 607 045 լարի:

Ասպինձա

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 6 նախագիծ, 3 101 240 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՉՀ գումարը 2 946 177 լարի:
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ասպինձայի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ, 830 467 լարի արժողությամբ, այդ թվում լեռան հիմնադրամի գումարը 788 943 լարի:

Ախալքալաքի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 14 նախագիծ, 3 110 622 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՉՀ գումարը 2 955 085 լարի:
- ❖ Բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամի կողմից Ախալքալաքի մունիցիպալիտետում ֆինանսավորվեց 1 նախագիծ, 246 800 լարի արժողությամբ, այդ թվում լեռան հիմնադրամի գումարը 234 460 լարի:

Բորջումի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 7 նախագիծ, 2 906 107 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՋՀ գումարը 2 324 884 լարի:

Նինոծմինդա

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 4 նախագիծ, 2 303 373 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՋՀ գումարը 2 188 204 լարի:

Կախեթի տարածաշրջան

Ախմետա

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 16 նախագիծ, 3 753 266 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՋՀ գումարը 3 715 929 լարի:

Լազոդեխի

- ❖ Տարածաշրջաններում իրականացվելիք նախագծերի հիմնադրամի շրջանակներում ֆինանսավորվեց 18 նախագիծ, 4 066 399 լարի գումարային արժողությամբ, այդ թվում՝ ՏՋՀ գումարը 3 862 985 լարի: